

ՊՈՂՈՒԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

ՊՈՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

## 1

Պողոս, “ծառայ Ձիսուս Քրիստոսի, կանչուած՝ առաքեալ **ԱԼՎԱԼՈՒ**, նշանակուած՝ **քարոզելու** Աստուծոյ աւետարանը, 2 (որ նախապէս խոստացած էր իր մարգարէներուն միջոցով՝ Սուրբ գիրքերուն մէջ,) 3 **որ** իր Որդիին՝ մեր Տէրոց՝ Ձիսուս Քրիստոսի մասին է – ան մարմինի համեմատ՝ եղաւ Դաւիթի գարմէն, 4 ու սրբութեան Հոգիին համեմատ՝ գօրութեամբ սահմանուեցաւ **իբր** Աստուծոյ Որդի՝ մեռելներէն յարութիւն առնելով –, 5 որուն միջոցով շնորհք եւ առաքելութիւն ստացանք՝ որպէսզի բոլոր ազգերը **առաջնորդենք** իր անունին հաւատքի հնագանդութեան 6 (անոնց մէջ դուք ալ կանչուած էք Ձիսուս Քրիստոսէ). 7 ձեր բոլորին՝ որ Հռոմի մէջ էք, Աստուծոյ սիրելիներուդ ու սուրբ **ԱԼՎԱԼՈՒ** կանչուածներուդ, շնորհք եւ խաղաղութիւն ծեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Ձիսուս Քրիստոսէ:

## ԳՈՂԱԲԱՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

8 Նախ շնորհակալ եմ ձեր բոլորին համար իմ Աստուծմէս՝ Ձիսուս Քրիստոսի միջոցով, որ ձեր հաւատքը կը պատմուի ամբողջ աշխարհի մէջ: 9 Զանի որ վկայ է ինձի Աստուած, որ ես կը պաշտեմ հոգիովս՝ անոր Որդիին աւետարանը **քարոզելով**, 10 թէ ի՞նչպէս անդադար կը յիշեմ ծեզ ամէն՝ ատեն՝ աղօթքներուս մէջ, աղերսելով որ <sup>բ</sup>վերջապէս անգամ մը յաջողիմ գալ ծեզի Աստուծոյ կամքով: 11 Որովհետեւ կը տենչամ տեսնել ծեզ՝ որ փոխանցեմ ծեզի հոգեւոր <sup>գ</sup>շնորհ մը, որպէսզի ամրանաք. 12 այսինքն ես ալ միսիթարուիմ ծեզի հետ՝ ծեր եւ իմ փոխադարձ հաւատքին միջոցով: 13 Սակայն չեմ ուզեր որ անգիտանաք, եղբայրներ, որ յաճախ առաջադրեցի գալ ծեզի, (եւ մինչեւ հիմա արգիլուեցայ,) որպէսզի ծեր մէջ ալ պտուղ մը ունենամ, ինչպէս միւս հեթանոսներուն մէջ: 14 Ես պարտական եմ թէ՝ Ֆոյներուն եւ թէ օտարներուն, թէ՝ իմաստուններուն եւ թէ անմիտներուն: 15 Ուստի, ինչ կը վերաբերի ինձի, յօժար եմ աւետարանելու նաեւ ծեզի՝ որ Հռոմի մէջ էք:

## ԱԻԵՏԱՐԱՆԻՆ ԶՈՐՈՒԹԻՒՆԸ

16 Արդարեւ ես ամօթ չեմ սեպեր <sup>հ</sup>աւետարանը, քանի որ ան Աստուծոյ գօրութիւնն է՝ ամէն հաւատացեալի փրկութեան համար, նախ Հրեային եւ ապա Ֆոյնին. 17 որովհետեւ անով Աստուծոյ արդարութիւնը՝ որ հաւատքով է՝ կը յայտնուի հաւատքի համար, ինչպէս գրուած է. «Արդարը պիտի ապրի հաւատքով»:

## ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ՄԵՂՅԸ

18 Արդարեւ Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց ամբողջ ամբարշտութեան եւ անիրաւութեան վրայ, **քանի** անոնք անիրաւութեամբ **գերի** բռնած են

<sup>ա</sup> **Կամ** ստրուկ

<sup>բ</sup> **Ֆուն.**՝ թերեւս հիմա

<sup>գ</sup> **Այսինքն**՝ շնորհուած պարգեւ

<sup>դ</sup> **Ումանք**՝ Քրիստոսի աւետարանը

## ՊՈՂՈՄԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

ճշմարտութիւնը: **19** Որովհետեւ ինչ որ կարելի է գիտնալ Աստուծոյ մասին՝ բացայայտ է իրենց մէջ, քանի Աստուած բացայայտեց զայն անոնց: **20** Արդարեւ անոր անտեսանելի բաները, **այսինքն՝** իր յաւերժական գօրութիւնը եւ աստուածութիւնը, կը տեսնուին աշխարհի արարչութենէն ի վեր ու կը հասկցուին անոր ստեղծածներով, որպէսզի անարդարանալի ըլլան: **21** Թէպէտ իրենք կը ճանչնային Աստուած, Աստուծոյ պէս չփառաւորեցին կամ շնորհակալ չեղան. հապա ունայնացան իրենց մտածումներուն մէջ, եւ իրենց սիրտը անխելքութեամբ<sup>4</sup> խաւարեցաւ: **22** Հաւաստելով թէ իրենք իմաստուն են՝ յիմարացան, **23** ու փոխեցին անեղծ Աստուծոյ փառքը՝ նմանցնելով եղծանելի մարդու, թռչուններու, չորքոտանիներու եւ սողուններու պատկերին: **24** Հետեւաբար Աստուած ալ մատնեց զանոնք անմաքրութեան՝ իրենց սիրտի ցանկութիւններուն համաձայն, որպէսզի իրենց մարմինները անպատուեն իրենք իրենց մէջ. **25** քանի որ Աստուծոյ ճշմարտութիւնը փոխեցին սուտի հետ, եւ ակնածեցան արարածէն ու պաշտեցին զայն՝ քան Արարիչը, որ օրհնեալ է յախտեան: Ամէն:

**26** Այս պատճառով Աստուած մատնեց զանոնք անպատի կիրքերու. քանի որ իրենց էգերն անգամ բնական յարաբերութիւնը փոխեցին բնութեան դէմ եղող յարաբերութեան: **27** Նմանապէս արուներն ալ՝ թողուցած էգին բնական յարաբերութիւնը՝ իրենց տոփանքով վառեցան իրարու հետ. արուները արուներու հետ անվայելչութիւն կը գործադրէին, եւ իրենց մոլորութեան արժանի հատուցումը կը ստանային իրենց վրայ: **28** Քանի չգնահատեցին պահել Աստուած **իրենց** գիտակցութեան մէջ, Աստուած ալ մատնեց զանոնք խոտելի միտքի մը՝ ընելու անպատշաճ քաներ: **29** Լեցուած ամէն **տեսակ** անիրաւութեամբ, պոռնկութեամբ, չարութեամբ, ագահութեամբ եւ չարամտութեամբ, լի նախանձով, մարդասպանութեամբ, հակամարտութեամբ, նենգութեամբ ու չարասրտութեամբ, **եւ ըլլալով** քանսարկու, **30** բամբասող, Աստուած ատող, նախատող, ամբարտաւան, պոռոտախօս, չար քաներ հնարող, ծնողներու անհնագանդ, **31** անխելք, ուխտադրուժ, անգութ, անհաշտ եւ անողորմ, **32** անոնք՝ գիտնալով **հանդերձ** Աստուծոյ դատավճիռը, թէ այսպիսի քաներ ընողները արժանի են մահուան, ո՛չ միայն կ'ընեն այդ քաները, այլ նաև բարեացակամ կ'ըլլան զանոնք ընողներուն հանդէպ:

## ԱՍՈՒԾՈՅ ԴԱՏԱՍԱՆԸ

### 2

Ուստի, ո՞վ մարդ, ո՞վ ալ ըլլաս, դուն որ կը դատես՝ չունիս արդարացում. քանի որ ի՞նչ բանով որ կը դատես ուրիշը, **անով** կը դատապարտես դուն քեզ. որովհետեւ դուն որ կը դատես՝ կ'ընես նոյն բաները: **2** Բայց գիտենք թէ Աստուծոյ դատաստանը կը կիրարկուի ճշմարտութեամբ անոնց հանդէպ՝ որ կ'ընեն այսպիսի քաներ: **3** Ուստի, ո՞վ մարդ, դուն որ կը դատես այսպիսի քաներ ընողները, բայց կ'ընես նոյն բաները, կը կարծե՞ս թէ զերծ պիտի մնաս Աստուծոյ դատաստանէն: **4** Կամ թէ կ'արհամարհե՞ս անոր քաղցրութեան, հանդուրժողութեան ու համբերատարութեան ճոխութիւնը, անգիտանալով թէ Աստուծոյ քաղցրութիւնը կ'առաջնորդէ քեզ ապաշխարութեան: **5** Բայց դուն՝ խստութեամբդ եւ անգեղջ սիրտովդ՝ բարկութիւն կը կուտակես քու վրադ բարկութեան օրուան համար, երբ Աստուծոյ արդար դատաստանը յայտնուի: **6** Ան պիտի հատուցանէ իրաքանչիւրին՝ իր գործերուն փոխարէնը. **7** յախտենական կեանք անոնց՝ որ համբերութեամբ յարատելով բարի գործերու մէջ՝ կը փնտոեն փառք, պատիւ եւ անմահութիւն. **8** իսկ սրդողում ու բարկութիւն անոնց՝ որ հակառակող են, չեն անսար ճշմարտութեան բայց կ'անսան անիրաւութեան. **9** տառապանք եւ տագնապ ամէն մարդու անձին վրայ՝ որ չարիք կը

<sup>4</sup> Յուլ.՝ անխելք սիրտը

## ՊՈՂՈՄԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

գործէ, **10** նախ Հրեային, ապա՝ Յոյնին. իսկ փառք, պատիւ ու խաղաղութիւն ամէն մէկուն՝ որ բարիք կը գործէ, նախ Հրեային, ապա՝ Յոյնին. **11** որովհետեւ Աստուծոյ քով աշառութիւն չկայ:

**12** Բոլոր անոնք որ մեղանչեցին առանց Օրէնքի՝ պիտի կորսուին առանց Օրէնքի, եւ անոնք որ մեղանչեցին Օրէնքի տակ՝ պիտի դատուին Օրէնքով, **13** (որովհետեւ Աստուծոյ առջեւ ո՞չ թէ Օրէնքը լսողները արդար են, հապա Օրէնքը գործադրողները պիտի արդարանան. **14** քանի որ հեթանոսները՝ որոնք Օրէնք չունին, երբ բնութեամբ կը գործադրեն Օրէնքին պարունակած բաները, Օրէնք չունենալով՝ բուն իրենք կ'ըլլան իրենց Օրէնքը. **15** անոնք ցոյց կու տան թէ Օրէնքին գործը իրենց սիրտին մէջ գրուած է, իրենց խղճմտանքին միաժամանակ վկայութեամբ, ու իրենց մտածումներուն զիրար ամբաստանելով եւ կամ ջատագովելով,) **16** այն օրը՝ երբ Աստուած պիտի դատէ մարդոց գաղտնիքները թիսուս Քրիստոսի միջոցով, իմ **քարոզած** աւետարանիս համաձայն:

### ՀՐԵԱՆԵՐԸ ԵՒ ՕՐԷՆՔԸ

**17** Ահա՝ դուն Հրեայ կը սկոչուիս, կոթնած ես Օրէնքին, եւ կը պարծենաս Աստուծմով. **18** գիտես **անոր** կամքը, կը զատորոշես տարբեր բաները՝ խրատուած ըլլալով Օրէնքէն, **19** ու համոզուած ես՝ թէ առաջնորդ ես կոյրերուն, լոյս՝ խաւարի մէջ եղողներուն, **20** կրթիչ՝ անմիտներուն **եւ** վարժապետ՝ երախաներուն, Օրէնքին մէջ ունենալով գիտութեան ու ճշմարտութեան արտայայտութիւնը: **21** Ուրեմն դո՛ւն՝ որ ընկերիդ կը սորվեցնես՝ դուն քեզի՝ չես սորվեցներ: Կը քարոզես չգողնալ, բայց դո՛ւն կը գողնաս: **22** Կ'ըսես՝ շնութիւն մի՛ ըներ, սակայն դո՛ւն շնութիւն կ'ընես: Կը զգուիս կուռքերէն, բայց դուն տաճա՛ր կը կողոպտես: **23** Օրէնքով կը պարծենաս, եւ դո՛ւն Օրէնքը բեկանելով՝ Աստուած կ'անպատուես: **24** Որովհետեւ ծեր պատճառով Աստուծոյ անունը կը հայիոյու հեթանոսներուն մէջ, ինչպէս գրուած է:

**25** Արդարեւ թլիփատութիւնը շահ կ'ունենայ՝ եթէ կիրարկես Օրէնքը. իսկ եթէ յանցաւոր ես Օրէնքին դէմ, քու թլիփատութիւնդ կ'ըլլայ անթլիփատութիւն: **26** Ուրեմն եթէ անթլիփատը պահէ Օրէնքին արդարութիւնը, միթէ թլիփատութիւն պիտի չսեպուի<sup>շ</sup> անոր անթլիփատութիւնը, **27** եւ բնիկ անթլիփատը՝ Օրէնքը գործադրելով՝ պիտի չդատապարտէ<sup>շ</sup> քեզ, որ գիրով ու թլիփատութեամբ զանց կ'ընես Օրէնքը: **28** Որովհետեւ Հրեայ չէ ա՛ն՝ որ երեւոյթով է, եւ թլիփատութիւն չէ ա՛յն՝ որ երեւոյթով է, մարմինով: **29** Հապա Հրեայ է ա՛ն՝ որ ծածուկ է, ու **իսկական** թլիփատութիւնը՝ սիրտի՛նն է, հոգիով եւ ո՞չ թէ գիրով. ու անոր գովեստը ո՞չ թէ մարդոցմէ է, հապա՝ Աստուծմէ:

### 3

Ուրեմն ի՞նչ առաւելութիւն ունի Հրեան, կամ ի՞նչ շահ կայ թլիփատութենէն. **2** շատ՝ ամէն կերպով: Նախ այն՝ որ Աստուծոյ պատգամները վստահուեցան անոնց: **3** Ուրեմն ի՞նչ. եթէ **անոնցմէ** ոմանք հաւատարիմ չեղան, միթէ անոնց անհաւատարմութիւնը ոչնչացո՞ւց Աստուծոյ հաւատարմութիւնը. ամե՛նելին: **4** Հապա Աստուած ճշմարտախօս պիտի ճանչցուի<sup>շ</sup>, եւ բոլոր մարդիկ՝ ստախօս. ինչպէս գրուած է. «Հետեւաբար դուն արդար պիտի ըլլաս խօսքերուդ մէջ, եւ յաղթես՝ երբ դատուիս»: **5** Ուրեմն եթէ մեր անիրաւութիւնը կ'ապացուցանէ Աստուծոյ արդարութիւնը, ի՞նչ ըսենք. միթէ անիրա՞ւ է

<sup>ш</sup> Յուն.՝ մականուանուիս

<sup>ш</sup> Յուն.՝ թող ըլլայ

## ՊՈՂՈՄԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՒՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

Աստուած, որ բարկութիւն կը ցուցաբերէ **6** (մարդկօրէն կ'ըսեմ). ամենեւին: Այլապէս՝ Աստուած ի՞նչպէս պիտի դատէ աշխարհը: **7** Որովհետեւ եթէ Աստուծոյ ճշմարտութիւնը կը ճոխանայ իմ ստութեամբս՝ իր փառքին համար, ա՛ ես ինչո՞ւ կը դատուիմ իբր մեղաւոր: **8** Եւ **ինչո՞ւ պատշաճ չէ ըսել.** «Զարիք գործենք՝ որ բարիք **յառաջ** գայ», ինչպէս ոմանք մեզի հայրունով **«կը զրպարտեն»** թէ մենք **այդպէս** կ'ըսենք: Ատոնց **գոյացածապարտութիւնը** արդարացի է:

### ՈՉ ՄԷԿ ՄԱՐԴ ԱՐԴԱՐ Է

**9** Ուրեմն ա՛ ի՞նչ **ըսենք**, գերազա՞նց ենք **հեթանոսներէն**: Ո՛չ մէկ կերպով. որովհետեւ նախապէս մեղադրեցինք Հրեաները եւ Յուները, թէ բոլո՞րը մեղքի տակ են, **10** ինչպէս գրուած է. «Ո՛չ մէկ արդար կայ, ո՛չ իսկ մէկ հատ: **11** Ո՛չ մէկը կայ որ հասկնայ, ո՛չ մէկը կայ որ փնտոէ Աստուած: **12** Բոլո՞րը խոտորեցան, միասին անպէտ դարձան. ո՛չ մէկ բարիք ընող կայ, ո՛չ իսկ մէկ հատ»: **13** «Անոնց կոկորդը բաց գերեզման է, իրենց լեզուով նենգաւոր եղան»: «Իժերու թոյն կայ անոնց շրթունքներուն տակ»: **14** «Անոնց բերանը լեցուն է անէծքով ու դառնութեամբ»: **15** «Անոնց ոտքերը կ'աճապարեն արիւն թափելու. **16** Կործանում եւ թշուառութիւն կայ անոնց ճամբաներուն մէջ: **17** Զճանչցան խաղաղութեան ճամբան»: **18** «Աստուծոյ վախը չկայ անոնց աչքերուն առջեւ»: **19** Բայց գիտենք թէ ի՞նչ որ կ'ըսէ Օրէնքը, կ'ըսէ անո՞նց՝ որ Օրէնքին տակ են, որպէսզի ամէն բերան գոցուի եւ ամբողջ աշխարհը դատապարտուի Աստուծոյ առջեւ: **20** Ուստի ո՛չ մէկ մարմին պիտի արդարանայ անոր առջեւ Օրէնքին գործերով, քանի որ Օրէնքին միջոցով կ'ըլլայ մեղքի գիտակցութիւնը:

### ԱՍՏՈՒԱԾ ԻՆՉՊԷՍ Կ'ԱՐԴԱՐԱՑՆԵ ՄԱՐԴԸ

**21** Բայց հիմա՝ առանց Օրէնքին՝ Աստուծոյ արդարութիւնը բացայայտ եղած է, վկայուած ըլլալով Օրէնքէն ու **Մարգարէներէն**. **22** այսինքն Աստուծոյ արդարութիւնը՝ որ Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքով է բոլոր հաւատացողներուն համար, քանի որ խտրութիւն չկայ: **23** Արդարեւ բոլորը մեղանչեցին, եւ զրկուած են Աստուծոյ փառքէն. **24** Բայց ծրի կ'արդարանան անոր շնորհքով, Քրիստոս Յիսուսով եղած ազատագրութեամբ: **25** Աստուած նախապէս սահմանեց զայն՝ քաւութիւն ըլլալու անոր արիւնին հաւատացողներուն, որպէսզի ցոյց տայ իր արդարութիւնը՝ ներելով նախապէս – Աստուծոյ հանդուրժողութեան ժամանակ – գործուած մեղքերը: **26** Այսինքն՝ իր արդարութիւնը այս ատեն ցոյց տալու համար, որպէսզի ինք արդար ըլլայ եւ արդարացնէ Յիսուսի հաւատացողը:

**27** Ուրեմն ո՞ւր մնաց պարծանքը. բացառուեցաւ: Ո՞ր Օրէնքէն, գործերո՞ւ **Օրէնքէն**: Ո՛չ, հապա հաւատքի Օրէնքէն. **28** որովհետեւ մենք կը հետեւցնենք թէ մարդ կ'արդարանայ հաւատքով՝ առանց Օրէնքին գործերուն: **29** Միթէ Աստուած միայն Հրեաներո՞ւնն է ու հեթանոսներունը չէ<sup>9</sup>. այո՛, նաեւ հեթանոսներունը: **30** Քանի որ մէկ Աստուած կայ, որ թլփատութիւնը կ'արդարացնէ հաւատքով, նաեւ անթլփատութիւնը՝ **Այս** հաւատքով: **31** Ուստի մենք կ'ոչնչացնե՞նք Օրէնքը հաւատքով: Ամենեւին. նոյնիսկ կը

<sup>8</sup> **Յուն.**՝ կ'ըսեն

<sup>9</sup> **Յուն.**՝ դատաստանը

<sup>10</sup> **Այսինքն.**՝ Մարգարէներու գիրքէն

հաստատե՞նք Օրէնքը:

ԱԲՐԱՀԱՄԻ ՕՐԻՆԱԿԸ

4

Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք թէ գտաւ Աբրահամ՝ մարմինի համեմատ մեր նախահայրը. **2** որովհետեւ եթէ Աբրահամ արդարացած ըլլար գործերով՝ պիտի պարծենար անոնցմով, բայց ո՛չ Աստուծոյ առջեւ: **3** Արդարեւ ի՞նչ կ'ըսէ Գիրքը. «Աբրահամ հաւատաց Աստուծոյ, եւ ատիկա արդարութիւն սեպուեցաւ իրեն»: **4** Բայց ա՛ն որ կը գործէ, անոր վարձատրութիւնը շնորհքէ եղած չի սեպուիր, հապա՝ պարտքէ: **5** Իսկ ա՛ն որ չի գործեր, բայց կը հաւատայ անոր՝ որ կ'արդարացնէ ամբարիշտը, իր հաւատքը արդարութիւն կը սեպուի իրեն: **6** Ինչպէս Դաւիթ ալ կը խօսի երանութեան մասին այն մարդուն, որուն Աստուած արդարութիւն կը սեպէ՝ առանց գործերու: **7** «Երանի՛ անոնց, – կ'ըսէ, – որոնց անօրէնութիւնները ներուեցան, եւ որոնց մեղքերը ծածկուեցան: **8** Երանի՛ այն մարդուն, որուն մեղք չի սեպէ Տէրը»: **9** Ուրեմն այս երանութիւնը միայն թլփատուածներո՞ւն համար է, թէ անթլփատուներուն համար ալ. քանի որ կ'ըսենք թէ “հաւատքը արդարութիւն սեպուեցաւ Աբրահամի՛: **10** Ուրեմն ի՞նչպէս սեպուեցաւ. թլփատութեա՞ն մէջ եղած ատենը, թէ անթլփատութեան մէջ: Ո՛չ թէ թլփատութեան մէջ, հապա՝ անթլփատութեան: **11** Յետոյ թլփատութեան նշանը ստացաւ՝ **իբր** կնիք անթլփատութեան ատենը **ունեցած** հաւատքին արդարութեան, որպէսզի ինք ըլլայ հայրը այն բոլոր հաւատացողներուն՝ որոնք անթլփատ են (անոնց ալ արդարութիւն սեպուելու համար), **12** նաեւ հայրը թլփատութեան՝ անոնց համար, որոնք ո՛չ միայն թլփատուած են, այլ նաեւ կ'ընթանան մեր հօր Աբրահամի անթլփատութեան **ատեն ունեցած** հաւատքին հետքերով:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒԽԸ ԿԸ ՍՏԱՑՈՒԻ ՀԱՒՏՔԵՎՈՎ

**13** Արդարեւ Աբրահամի եւ անոր զարմին՝ աշխարհը ժառանգելու համար **տրուած** խոստումը ո՛չ թէ Օրէնքով եղաւ, հապա հաւատքին արդարութեամբ: **14** Քանի որ եթէ Օրէնքէն եղողները ժառանգորդ ըլլային, հաւատքը պիտի փճանար, եւ խոստումը ոչնչանար: **15** Որովհետեւ Օրէնքը բարկութիւն կը գործադրէ. քանի որ ուր Օրէնք չկայ, օրինազանցութիւն ալ չկայ: **16** Ուստի **ժառանգորդ ըլլալը** հաւատքէն է, որ շնորհքով եղած ըլլայ, որպէսզի խոստումը մնայուն ըլլայ ամբողջ զարմին. ո՛չ միայն անոր՝ որ Օրէնքէն է, այլ նաեւ անո՛ր՝ որ Աբրահամի հաւատքէն է: Ան մեր բոլորին հայրն է **17** (ինչպէս գրուած է. “Քեզ շատ ազգերու հայր ըրի՛) Աստուծոյ առջեւ՝ որուն ինք հաւատաց, որ կեանք կու տայ մեռելներուն ու չեղած բաները կը կոչէ եղածներու պէս: **18** Չյուսացուած բանին՝ յոյսով հաւատաց, թէ ինք շատ ազգերու հայր պիտի ըլլայ (ինչպէս ըսուեցաւ ալ թէ “քու զարմդ այսպէս պիտի ըլլայ՛). **19** Եւ հաւատքի մէջ չտկարանալով՝ ուշադիր չեղաւ իր մարմինին, **որ** արդէն մեռածի պէս էր, (որովհետեւ ինք հարիւր տարեկանի չափ էր,) ո՛չ ալ Սառայի արգանդին մեռած ըլլալուն: **20** Անհաւատութեամբ չտատամսեցաւ Աստուծոյ խոստումին հանդէպ, հապա հաւատքով զօրացած՝ փառք տուաւ Աստուծոյ, **21** եւ լման համոզուեցաւ թէ ի՞նչ որ ան խոստացաւ՝ կարող է նաեւ իրագործել: **22** Ուստի արդարութիւն սեպուեցաւ իրեն:

**23** Բայց գրուեցաւ ո՛չ միայն անոր համար՝ թէ “սեպուեցաւ իրեն՛, **24** այլ նաեւ մեզի համար, որոնց պիտի սեպուի՝ քանի որ կը հաւատանք անո՛ր՝ որ մեռելներէն յարուցանեց Յիսուսը՝ մեր Տէրը, **25** որ մատնուեցաւ մեր յանցանքներուն համար ու յարութիւն առաւ մեզ արդարացնելու համար:

## 5

Ուրեմն մենք՝ հաւատքով արդարացած ըլլալով՝ խաղաղութիւն ունինք Աստուծոյ հետ մեր Տէրոց՝ Յիսուս Քրիստոսի միջոցով։ **2** Անով նաեւ **արտօնութիւն ունեցանք** հաւատքով մօտենալու այս շնորհքին՝ որուն մէջ կեցած ենք, եւ կը պարծենանք Աստուծոյ փառքին յոյսով։ **3** Ո՛չ միայն այսքան, հապա կը պարծենանք տառապանքներու մէջ ալ. որովհետեւ գիտենք թէ տառապանքը կ'իրագործէ համբերութիւն, **4** համբերութիւնը՝ փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս։ **5** Եւ յոյսը ամօթահար չ'ըներ, որովհետեւ Աստուծոյ սէրը մեր սիրտերուն մէջ սփռուած է Սուրբ Հոգիին միջոցով՝ որ տրուեցաւ մեզի։ **6** Արդարեւ մինչ մենք տակալին տկար էինք, յարմար ժամանակին՝ Քրիստոս մեռաւ ամբարիշտներուն համար. **7** <sup>ա</sup>հազիւ թէ արդարի մը համար մէկը **ուզէ** մեռնիլ, (թերեւս բարի մարդու մը համար մէկը <sup>բ</sup>յօժարի մեռնիլ,) **8** մինչդեռ Աստուած մեզի հանդէալ **ունեցած** իր սէրը ապացուցանեց **այն իրողութեամբ**, որ երբ տակալին մեղաւոր էինք՝ **9** Քրիստոս մեռաւ մեզի համար. ուրեմն հիմա որ արդարացանք իր արիւնով, ո՛րչափ աւելի բարկութեան պիտի փրկութինք իրմով։ **10** Որովհետեւ եթէ մեր թշնամի եղած ատենք հաշտուեցանք Աստուծոյ հետ իր Որդիին մահով, ո՛րչափ աւելի մեր հաշտուած ատենք պիտի փրկութինք անոր կեանքով։ **11** Եւ ո՛չ միայն **ասիկա**, այլ նաեւ կը պարծենանք Աստուծմով՝ մեր Տէրոց՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, որով հիմա ստացանք հաշտութիւնը։

## ԱԴԱՄ ԵՒ ՔՐԻՍՏՈՍ

**12** Ուստի ինչպէս մէկ մարդով մեղքը աշխարհ մտաւ, ու մեղքով՝ մահը, եւ այնպէս՝ մահը փոխանցուեցաւ բոլոր մարդոց, <sup>ո</sup>քանի որ բոլորն ալ մեղանչեցին. **13** (որովհետեւ մինչեւ Օրէնքին **տրուիլը**<sup>ա</sup> աշխարհի մէջ մեղք կար, բայց մեղք չէր վերագրուեր՝ երբ Օրէնք չկար։ **14** Սակայն մահը թագաւորեց Աղամէն մինչեւ Սովուէս, նոյնիսկ Աղամի օրինազանցութեան նման չմեղանչողներուն վրայ. ինք նախատիպն էր անոր՝ որ յետոյ պիտի գար։ **15** Բայց <sup>ե</sup>շնորհը յանցանքին պէս չէ. որովհետեւ եթէ մէկին յանցանքով շատեր մեռան, ալ ո՛րչափ աւելի շատերուն վրայ առատացաւ Աստուծոյ <sup>գ</sup>շնորհքը, եւ պարգենը՝ որ շնորհուեցաւ մէկ մարդու՝ Յիսուս Քրիստոսի միջոցով։ **16** Եւ պարգենը **այնպէս** չէ, ինչպէս մէկ մեղանչողին **պատահածը**. որովհետեւ դատաստանը մէկին **մեղքով** դատապարտութեան **մատնեց**, բայց շնորհը շատ յանցանքներէ արդարութեան **առաջնորդեց**: **17** Քանի որ եթէ մէկ մարդու յանցանքով՝ մահը թագաւորեց **այդ** մէկով, ո՛րչափ աւելի անոնք՝ որ կը ստանան շնորհքի ու արդարութեան պարգեւին առատութիւնը, կեանքի մէջ պիտի թագաւորեն միակ Յիսուս Քրիստոսի միջոցով։) **18** Ուրեմն, ինչպէս բոլոր մարդոց դատապարտութեան **վճիռ տրուեցաւ** մէկին յանցանքով, այնպէս ալ բոլոր

<sup>ա</sup> **Յուն.**՝ որովհետեւ հազիւ

<sup>բ</sup> **Յուն.**՝ որովհետեւ թերեւս

<sup>գ</sup> **Յուն.**՝ յանդգնի

<sup>դ</sup> **Կամ**՝ որով

<sup>ե</sup> **Այսինքն**՝ շնորհուած պարգենը

<sup>գ</sup> **Այսինքն**՝ օրհնութիւնը

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

մարդոց կեանք տուող արդարութիւն շնորհուեցաւ մէկին արդարութեամբ: **19** Որովհետեւ ինչպէս շատեր մեղաւոր եղան մէկ մարդու անհնազանդութեամբ, այնպէս շատեր արդար պիտի ըլլան մէկին հնազանդութեամբ: **20** Սակայն Օրէնքը ներս սպրեցաւ՝ որպէսզի յանցանքը աւելնայ. բայց հոն՝ ուր մեղքը աւելցաւ, շնորհքը չափազանց առատացաւ: **21** Որպէսզի՝ ինչպէս մեղքը թագաւորեց մինչեւ մահ, այնպէս ալ շնորհքը թագաւորէ արդարութեամբ՝ մինչեւ յակիտենական կեանք, մեր Տէրոջ՝ Ձիսուս Քրիստոսի միջոցով:

### ՄԵՂՔԻՆ ՄԵՌԱԾ, ԲԱՅՑ ԶՐԻՍՏՈՍԻ ՄԻԱՆԱԼՈՎ ՈՂՋ

## 6

Ուրեմն ի՞նչ պիտի ըսենք. արդեօք յարատեւե՞նք մեղքի մէջ՝ որպէսզի շնորհքը աւելնայ: **2** Ամենեւին: Մենք՝ որ մեռած ենք մեղքին հանդէա, ի՞նչպէս տակաւին ապրինք անոր մէջ: **3** Չէ՞ք գիտեր թէ մենք բոլորս՝ որ մկրտուեցանք Ձիսուս Քրիստոսով, մկրտուեցանք անոր մահով: **4** Ուրեմն անոր հետ թաղուեցանք մկրտութեամբ՝ մահուան համար. որպէսզի ինչպէս Քրիստոս մեռելներէն յարութիւն առաւ՝ Հօրք փառքով, այնպէս ալ մենք ընթանանք նոր կեանքի մէջ: **5** Որովհետեւ եթէ մենք տնկակից եղանք անոր մահուան նմանութեամբ, նաեւ կցորդ պիտի ըլլանք անոր յարութեան նմանութեամբ: **6** Սա՛ գիտնանք՝ թէ մեր հին մարդը խաչուեցաւ անոր հետ, որ մեղքի մարմինը ոչնչանայ, որպէսզի այլեւս մեղքին ստրուկը չըլլանք: **7** Որովհետեւ ա՛ն որ մեռած է մեղքին, արդարացած է մեղքէն: **8** Ուրեմն եթէ մենք մեռանք Քրիստոսի հետ, կը հաւատանք թէ պիտի ապրինք ալ անոր հետ: **9** Քանի որ գիտենք թէ Քրիստոս մեռելներէն յարութիւն առած ըլլալով՝ այլեւս չի մեռնիր. ա՛լ մահը չի տիրեր անոր վրայ: **10** Որովհետեւ երբ ան մեռաւ, մեղքին համար մեռաւ՝ մէկ անգամ ընդմիշտ, եւ հիմա որ կ'ապրի՝ Աստուծոյ՝ համար կ'ապրի: **11** Նոյնպէս դուք ձեզ մեռած սեպեցէք մեղքին, բայց ողջ՝ Աստուծոյ, մեր Տէրոջ՝ Քրիստոս Ձիսուսի միջոցով:

**12** Ուրեմն ա՛լ մեղքը թող չթագաւորէ ձեր մահկանացու մարմինին վրայ, որ հնազանդիք անոր ցանկութիւններուն. **13** ու ձեր մարմինին անդամները մի՛ յանձնեք մեղքին՝ անհրատութեան գործիք ըլլալու: Հապա դուք ձեզ ընծայեցէք Աստուծոյ՝ որպէս մեռելներէն վերապրողներ, եւ ձեր անդամները ընծայեցէք Աստուծոյ՝ իբր արդարութեան գործիքներ: **14** Արդարեւ մեղքը պիտի չիշխէ ձեր վրայ. որովհետեւ ո՛չ թէ Օրէնքի տակ էք, հապա՝ շնորհքի տակ:

### ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՆԵՐԸ

**15** Ուրեմն ի՞նչ. մեղանչե՞նք, քանի որ Օրէնքի տակ չենք, հապա՝ շնորհքի տակ: Ամենեւին: **16** Չէ՞ք գիտեր թէ որո՛ւն որ դուք ձեզ իբր ստրուկ յանձնեցք՝ հնազանդելու համար, ստրուկ կ'ըլլաք անոր՝ որուն կը հնազանդիք, թէ՛ մեղքին՝ որ կ'առաջնորդէ մահուան, եւ թէ հնազանդութեան՝ որ կ'առաջնորդէ արդարութեան: **17** Բայց շնորհակալութիւն Աստուծոյ, որ մեղքին ստրուկ ըլլալէ եսք՝ սրտանց հնազանդեցաք այն ուսուցումի տիպարին՝ որ աւանդուեցաւ ձեզի: **18** Ուստի դուք՝ ազատած ըլլալով մեղքէն՝ ստրուկ եղաք արդարութեան. **19** (մարդկային կերպով կը խօսիմ՝ ձեր մարմինին տկարութեան պատճառով.) քանի որ ինչպէս յանձնեցիք ձեր անդամները անօրէնութեան՝ ստրուկ ըլլալու անմաքրութեան եւ անօրէնութեան, այնպէս ալ հիմա ընծայեցէք ձեր անդամները սրբութեան՝ ստրուկ ըլլալու արդարութեան: **20** Որովհետեւ երբ դուք ստրուկ էիք մեղքին՝ ազատ էիք արդարութենէն: **21** Ուրեմն այն ատեն ի՞նչ պտուղ ունէիք այն բաներէն՝ որոնց համար հիմա կ'ամշնաք. որովհետեւ անոնց վախճանը մահ է: **22** Իսկ հիմա, մեղքէն ազատած եւ Աստուծոյ ստրուկ եղած ըլլալով, ձեր պտուղը ունիք՝

## ՊՈՂՈՄԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

սրբութեամբ, ու վախճանը՝ յալիտենական կեանքը: **23** Որովհետեւ մեղքին շվարծատրութիւնը մահ է, բայց Աստուծոյ շնորհը՝ յալիտենական կեանք է, Յիսուս Քրիստոսի՝ մեր Տէրոց միջոցով:

### ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՄՈՒՍՈՒԹԵՆԵՆ

#### 7

Միթէ չէ՞ք գիտեր, եղբայրներ, (քանի որ ես Օրէնքը գիտցողներուն կը խօսիմ,) թէ Օրէնքը կը տիրէ մարդուն վրայ՝ այնքան ատեն որ ան կ'ապրի: **2** Որովհետեւ ամուսին ունեցող կինը Օրէնքով կապուած է իր ամուսինին՝ քանի դեռ ան կ'ապրի. բայց եթէ ամուսինը մեռնի, արձակուած է ամուսինին Օրէնքէն: **3** Ուրեմն, քանի դեռ ամուսինը կ'ապրի, շնացող պիտի կոչուի՝ եթէ ուրիշ մարդու մը կից ըլլայ. բայց եթէ ամուսինը մեռնի՝ ազատ կ'ըլլայ այդ Օրէնքէն, այնպէս որ շնացող չ'ըլլար՝ եթէ ուրիշ մարդու մը կից ըլլայ: **4** Հետեւաբար դուք ալ, եղբայրներս, Օրէնքին մեռաք Քրիստոսի մարմինով, որպէսզի ըլլաք ուրիշի՝ մը, անոր՝ որ մեռելներէն յարութիւն առաւ, որպէսզի պտուղ արտադրենք Աստուծոյ: **5** Քանի որ երբ մենք մարմինով էինք, մեղքերու կիրքերը՝ որոնք կը դրդուէից Օրէնքէն՝ կը ներգործէին մեր անդամներուն մէջ, որպէսզի պտուղ արտադրենք մահուան: **6** Իսկ հիմա արձակուեցանք Օրէնքէն. որովհետեւ մենք մեռանք անոր՝ որ գերի բռնած էր մեզ, որպէսզի ծառայենք նորոգուած հոգիով, եւ ո՛չ թէ հնամաշ գիրին համածայն:

### ՕՐԵՆՔ ԵՒ ՄԵԴ

**7** Ուրեմն ի՞նչ ըսենք. Օրէնքը մե՞ղք է: Ամե՛նելին: Նոյնիսկ ես պիտի չգիտնայի մեղքը, եթէ Օրէնքը չըլլար. նաեւ պիտի չգիտնայի ցանկութիւնը, եթէ Օրէնքը ըսած չըլլար. «Մի՛ ցանկար»: **8** Բայց մեղքը՝ առիթ առնելով պատուիրանէն՝ մէջս իրագործեց ամէն տեսակ ցանկութիւն, որովհետեւ մեղքը մեռած էր առանց Օրէնքին: **9** Արդարեւ ես ժամանակ մը ողջ էի՝ առանց Օրէնքին. բայց երբ պատուիրանը եկաւ՝ մեղքը վերապրեցաւ, **10** ու ես մեռայ. եւ այն պատուիրանը՝ որ կեանքի համար էր, նոյնը ինծի մահուան համար եղաւ: **11** Որովհետեւ մեղքը՝ պատուիրանէն առիթ առնելով՝ խաբեց զիս, եւ սպաննեց անով: **12** Հետեւաբար Օրէնքը սուրբ է, ու պատուիրանը՝ սուրբ, արդար եւ բարի:

### ՏԱԳԻԱՊ ՄԱՐԴՈՒՆ ՄԷՋ

**13** Ուրեմն ինչ որ բարի է՝ մա՞՞ի պատճառեց ինծի: Ամե՛նելին: Հապա մեղքն էր որ մահ իրագործեց իմ մէջս՝ բարիին միջոցով, որպէսզի մեղքը գերազանցօրէն մեղաւոր երեւայ՝ պատուիրանին միջոցով: **14** Արդարեւ գիտենք թէ Օրէնքը հոգեւոր է, բայց ես մարմնաւոր եմ՝ ծախուած մեղքին հպատակութեան. **15** որովհետեւ ինչ որ կը գործադրեմ՝ չեմ ըմբռներ: Ո՛չ թէ ինչ որ կ'ուզեմ՝ զայն կ'ընեմ, հապա ինչ որ կ'ատեմ՝ զայն կ'ընեմ: **16** Ուրեմն եթէ չուզածս կ'ընեմ, հաւանութիւն կու տամ Օրէնքին՝ թէ բարի է: **17** Իսկ հիմա՝ ո՛չ թէ ե՛ս կը գործադրեմ զայն, հապա մե՛ղքը՝ որ կը բնակի իմ մէջս: **18** Քանի որ գիտեմ թէ իմ մէջս, այսինքն մարմինիս մէջ, ո՛չ մէկ բարի բան կը բնակի. որովհետեւ կամենալը քովս է, բայց չեմ գտներ բարին գործադրելը: **19** Արդարեւ բարին որ կ'ուզեմ՝ չեմ ըներ,

<sup>ա</sup> Յուն.՝ թոշակը

<sup>բ</sup> Այսինքն՝ շնորհած պարգևը

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

հապա չարը որ չեմ ուզեր՝ զայն կ'լնեմ: **20** Իսկ եթէ կ'լնեմ ինչ որ չեմ ուզեր, ալ ո՛չ թէ ե՞ս կը գործադրեմ զայն, հապա մեղքը՝ որ իմ մէջս կը բնակի: **21** Ուրեմն ես կը գտնեմ օրէնք մը, որ երբ կամենամ բարին ընելը, չարը քովս կ'ուլայ: **22** Որովհետեւ ներքին մարդուն համաձայն՝ կը հաւնիմ Աստուծոյ Օրէնքը. **23** բայց անդամներուս մէջ կը տեսնեմ ուրիշ օրէնք մը, որ կը մարտնչի միտքիս Օրէնքին դէմ եւ գերի կը դարձնէ զիս մեղքի օրէնքին՝ որ անդամներուս մէջ է: **24** Ի՞նչ թշուառ մարդ եմ. ո՞վ պիտի ազատէ զիս այս մահկանացու մարմինէն:

**25** “Շնորհակալութիւն Աստուծոյ”, մեր Տէրոց՝ Յիսուս Քրիստոսի միջոցով: Ուրեմն ես ինքս միտքով կը ծառայեմ Աստուծոյ Օրէնքին, իսկ մարմինով՝ մեղքի օրէնքին:

### ՀՈԳԻՈՎ ԿԵԱՆՔ

#### 8

Ուրեմն հիմա դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմինին համաձայն չեն ընթանար<sup>w</sup>. **2** քանի որ կեանքի Հոգիին Օրէնքը՝ Քրիստոս Յիսուսով ազատեց զիս մեղքի եւ մահուան օրէնքէն: **3** Արդարեւ ինչ որ Օրէնքը անկարող էր ընել, որովհետեւ մարմինը տկարացուցած էր զայն, Աստուած՝ **իրագործեց**. իր Որդին դրկեց՝ մեղանչական մարմինի նմանութեամբ եւ մեղքին պատճառով, ու դատապարտեց մեղքը **այդ** մարմինին մէջ, **4** որպէսզի Օրէնքին արդարութիւնը գործադրուի մեր մէջ՝ որ չենք ընթանար մարմինին համաձայն, այլ՝ Հոգիին: **5** Արդարեւ մարմինին համաձայն ապրողները՝ կը մտածեն մարմինին բաները, իսկ Հոգիին համաձայն ապրողները՝ Հոգիին բաները. **6** ՞նաեւ մարմնաւոր մտածումը մահ է, իսկ հոգեւոր մտածումը՝ կեանք ու խաղաղութիւն: **7** Արդարեւ մարմնաւոր մտածումը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, քանի Աստուծոյ Օրէնքին չի հպատակիր. մանաւանդ չի կրնար ալ, **8** որովհետեւ մարմինին համաձայն ապրողները չեն կրնար հաճեցնել Աստուած: **9** Բայց դուք չէք ապրիր մարմինին համաձայն, հապա՝ Հոգիին համաձայն, եթէ իսկապէս Աստուծոյ Հոգին բնակած է ձեր մէջ. իսկ եթէ մէկը Քրիստոսի Հոգին չունի, ինք անորը չէ: **10** Սակայն եթէ Քրիստոս ձեր մէջ է, մարմինը մեռած է մեղքին պատճառով, իսկ Հոգին կեանք **կը պարգևէ** արդարութեան պատճառով: **11** Ու եթէ Յիսուսը մեռելներէն յարուցանողին Հոգին բնակած է ձեր մէջ, ուրեմն ա՛ն՝ որ մեռելներէն յարուցանեց Քրիստոսը, կեանք պիտի տայ նաեւ ձեր մահկանացու մարմիններուն՝ իր Հոգիով, որ կը բնակի ձեր մէջ:

**12** Ուրեմն, եղբայրներ, պարտական ենք, **բայց** ո՛չ մարմինին՝ մարմինին համաձայն ապրելու **համար**: **13** Որովհետեւ եթէ մարմինին համաձայն ապրիք՝ պիտի մեռնիք, իսկ եթէ Հոգիով մարմինին գործերը մեռցնէք՝ պիտի ապրիք: **14** Արդարեւ բոլոր անոնք որ կ'առաջնորդուին Աստուծոյ Հոգիով, անոնք են Աստուծոյ որդիները. **15** քանի որ դուք չստացաք ստրկութեան հոգին՝ դարձեալ վախնալու **համար**, հապա ստացաք որդեգրութեան Հոգին, որուն միջոցով <sup>գոչենք</sup>՝ կը գոչենք<sup>b</sup>: «Աբբա՛, Հայր»: **16** Նոյնինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր հոգիին հետ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. **17** ու եթէ զաւակներ՝ ուրեմն ժառանգորդներ, Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի

<sup>w</sup> Յուն.՝ Շնորհակալ եմ Աստուծմէ

<sup>x</sup> Ոմանք կ'աւելցնեն՝ այլ՝ Հոգիին համաձայն

<sup>y</sup> Յուն.՝ որովհետեւ

<sup>z</sup> Յուն.՝ կ'աղաղակենք

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

Ժառանգակիցներ, որպէսզի եթէ չարչարուինք **իրեն** հետ, նաեւ փառաւորուինք **իրեն** հետ:

### ԱՊԱԳԱՅ ՓԱՌԵԸ

**18** Արդարեւ ես այնպէս կը սեպեմ թէ այս ներկայ ժամանակին չարչարանքները՝ արժանի չեն **բաղդատուելու** գալիք փառքին հետ, որ պիտի յայտնուի մեր մէջ: **19** Քանի որ արարածները եռանդուն ակնկալութեամբ կը սպասեն Աստուծոյ որդիներուն յայտնութեան: **20** Որովհետեւ արարածները հպատակեցան ունայնութեան, (ո՞չ թէ **իրենց** կամքով, հապա անոր պատճառով՝ որ հպատակեցուց **զիրենք**,) **21** այն յոյսով՝ որ արարածները իրենք ալ, ազատելով ապականութեան ստրկութենէն, **հասնին** Աստուծոյ գաւակներուն փառաւոր ազատութեան: **22** Քանի որ գիտենք թէ բոլոր արարածները միասին կը հառաչեն ու երկունքի ցաւ կը քաշեն մինչեւ հիմա: **23** Եւ ո՞չ միայն **անոնք**, հապա մենք ալ՝ որ ունինք Հոգին երախայրիքը, նոյնիսկ մենք մեր մէջ կը հառաչենք՝ սպասելով որդեգրութեան, **այսինքն** մեր մարմինին ազատագրութեան: **24** Որովհետեւ մենք յոյսով փրկուեցանք. բայց այն յոյսը որ կը տեսնուի՝ յոյս չէ. քանի որ ինչո՞ւ մէկը տակաւին յուսայ այն բանին՝ որ **արդէն** կը տեսնէ: **25** Իսկ եթէ կը յուսանք մեր չտեսած բանին, ալ համբերութեամբ սպասենք **անոր**:

**26** Նոյնպէս Հոգին ալ կ'օգնէ մեր տկարութիւններուն **մէջ**. քանի որ չենք գիտեր ի՞նչ բանի **համար** աղօթելու ենք՝ ինչպէս պէտք է. բայց Հոգին ի՞նք կը բարեխօսէ մեզի համար՝ անբարբար հառաչանքներով: **27** Եւ ա՞ն՝ որ կը զննէ սիրտերը, գիտէ Հոգին ի՞նչ մտածելը, քանի որ կը բարեխօսէ սուրբերուն համար Աստուծոյ **կամքին** համաձայն: **28** Նաեւ գիտենք թէ բոլոր բաները բարին գործակից կ'ըլլան անո՞ց՝ որ կը սիրեն Աստուծած, անո՞ց՝ որ կանչուած են **իր** առաջադրութեան համաձայն: **29** Որովհետեւ անո՞ք՝ որ նախապէս ճանչցաւ, նաեւ նախասահմանեց՝ կերպարանակից ըլլալու իր Որդիին պատկերին, որպէսզի ան ըլլայ անդրանիկը բազմաթիւ եղբայրներու մէջ: **30** Եւ անոնք որ նախասահմանեց՝ նաեւ կանչեց, անոնք որ կանչեց՝ նաեւ արդարացուց, եւ անոնք որ արդարացուց՝ նաեւ փառաւորեց:

### ԱՍՈՒԻԾՈՅ ՍԵՐԸ ՅԻՍՈՒԽ ՋՐԻՍՈՍՈՎԿ

**31** Ուրեմն ի՞նչ ըսենք այս բաներուն մասին. եթէ Աստուծած մեր կողմն է, ո՞վ հակառակ է մեզի: **32** Ա՞ն՝ որ չխնայեց իր իսկ Որդիին, հապա մատնեց զայն մեր բոլորին համար, ի՞նչպէս անոր հետ նաեւ պիտի չպարգևեէ մեզի բոլոր բաները: **33** Ո՞վ պիտի մեղադրէ Աստուծոյ ընտրածները. Աստուծած է արդարացնողը: **34** **Ուրեմն** ո՞վ է դատապարտողը. Ջրիստոս՝ որ մեռաւ, մանաւանդ յարութիւն առաւ եւ Աստուծոյ աջ կողմն է, ա՞ն կը բարեխօսէ մեզի համար: **35** **Ուրեմն** ո՞վ պիտի զատէ մեզ Ջրիստոսի սէրէն. տառապա՞նքը, կամ տագնա՞պը, կամ հալածա՞նքը, կամ սո՞վը, կամ մերկութի՞նք, կամ վտա՞նգը, կամ սո՞ւրը: **36** (Ինչպէս գրուած է. «**Զեզի**՝ համար ամբողջ օրը կը մեռցուինք. Դսպանդանոցի ոչխարի պէս կը սեպուինք»:) **37** Նոյնիսկ այս բոլոր բաներուն մէջ աւելի քան յաղթող կ'ըլլանք անո՞վ՝ որ սիրեց մեզ: **38** Որովհետեւ ես համոգուած եմ թէ ո՞չ մահը, ո՞չ կեանքը, ո՞չ հեշտակները, ո՞չ իշխանութիւնները, ո՞չ զօրութիւնները, ո՞չ ներկայ բաները, ո՞չ գալիք բաները, **39** ո՞չ բարձրութիւնը, ո՞չ խորունկութիւնը, ո՞չ ալ ունէ ուրիշ արարած պիտի կարենայ զատել մեզ Աստուծոյ սէրէն, որ Ջրիստոս Յիսուսով՝ մեր **Տէրոջմով** է:

<sup>Դ</sup> ՅուԱ.՝ մորթուելիք

## ԱՍՏՈՒԱԾ ԵՒ ԻՐ ԸՆՏՐԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

9

Ճշմարտութիւնը կ'ըսեմ Ձրիստոսով **ու** չեմ ստեր, (իմ խղճմտանքս ալ կը վկայէ ինձի Սուլր Հոգիով,) **2** թէ մեծ տրտմութիւն ունիմ, եւ սիրտիս մէջ՝ յարատեւ ցաւ: **3** Ջանի որ կ'ըղձայի ես ինքս նզովուած ըլլալ Ձրիստոսէ, իմ եղբայրներուս՝ մարմինի “կողմէն ազգականներուս համար, **4** որոնք հսրայելացի են: Անո՞նցն են որդեգրութիւնը, փառքը, ուխտերը, օրէնսդրութիւնը, պաշտամունքն ու խոստումները: **5** Իրե՞նցն են նախահայրերը. իրենցմէ՛ ալ մարմինի կողմէն **եկաւ** Ձրիստոս, որ բոլորին վրայ է, յալիտեան օրհնեալ Աստուած: Ամէն: **6** Բայց Աստուծոյ խօսքը ապարդին նկատուելու չէ. քանի որ բոլոր հսրայելէ եղողները հսրայելացի չեն, **7** ո՞չ ալ բոլորը զաւակներ են՝ քանի որ Աքրահամի գարմն են. հապա **ըսուեցաւ**. «Իսահակի՝ **անունով** պիտի կոչուի քու զարմդ»: **8** Այսինքն անոնք որ մարմինի զաւակներն են՝ Աստուծոյ զաւակները չեն. հապա խոստումին զաւակները գարմ կը սեպուին: **9** Որովհետեւ խոստումին խօսքը սա՛ էր. «Այս ատեն պիտի գամ, ու Սառա որդի մը պիտի ունենայ»: **10** Եւ ո՞չ միայն **այդ**, այլ նաեւ երբ Ռեբեկա յղացաւ **մէկէն՝** մեր Իսահակ հօրմէն, **11** (քանի որ **զաւակները** դեռ չծնած, ո՞չ ալ որեւէ բարիք կամ չարիք գործած, որպէսզի Աստուծոյ առաջադրութիւնը հաստատ մնայ՝ ընտրութեան համաձայն, **12** **այսինքն** ո՞չ թէ գործերէն **ըլլայ**, հապա անկէ՛ որ կանչեց.) անոր ըսուեցաւ. **13** «Երէցը պիտի ծառայէ կրտսերին», ինչպէս գրուած է. «Յակո՞ք սիրեցի, իսկ Եսաւը ատեցի»:

**14** Ուրեմն ի՞նչ ըսենք. միթէ Աստուծոյ քով անիրաւութիւն կայ: Ամե՛նելին: **15** Որովհետեւ ան Մովսէսի կ'ըսէ. «Անո՞ր որ պիտի ողորմիմ՝ կ'ողորմիմ, եւ անո՞ր վրայ որ պիտի գթամ՝ կը գթամ»: **16** Ուրեմն բո՞չ մարդուն ուզելէն, ո՞չ ալ վազելէն՝ **կախեալ** է, հապա Աստուծմէ՛ որ կ'ողորմի: **17** Ջանի որ Գիրքը կ'ըսէ Փարաւոնի. «Բարձրացուցի քեզ, որպէսզի իմ գօրութիւնս ցոյց տամ քու միջցոցվդ, եւ իմ անունս հոչակուի ամբողջ երկրին մէջ»: **18** Ուրեմն կ'ողորմի որո՞ն որ ուզէ, եւ կը խստացնէ զայն որ ուզէ:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ

**19** Հետեւաբար դուն պիտի ըսես ինձի թէ “ա՛ ինչո՞ւ կը մեղադրէ, որովհետեւ ո՞վ **կրնայ** ընդդիմանալ անոր ծրագիրին□: **20** Բայց դուն ո՞վ ես, ո՞վ մարդ, որ կը դիմադարձես Աստուծոյ: Միթէ կերտուած ը կրնա՞յ ըսել **զինք** կերտողին. «Ինչո՞ւ այսպէս շինեցիր զիս»: **21** Միթէ բրուտը իրաւասութիւն չունի՞ կալին վրայ, որ նոյն զանգուածէն շինէ անօթ մը՝ պատիկի համար, իսկ ուրիշ մը՝ անպատութեան համար: **22** **Ի՞նչ կրնանք ըսել՝** եթէ Աստուած, ուզելով ցոյց տալ **իր** բարկութիւնը եւ գիտցնել իր գօրութիւնը, շատ համբերատարութեամբ տոկաց կորսուելու պատրաստուած բարկութեան անօթներուն, **23** որպէսզի գիտցնէ իր փառքին ճոխութիւնը՝ ողորմութիւն գտնող անօթներուն, որ նախապէս պատրաստեց փառքի համար, **24** այսինքն՝ մեզի, որ կանչեց ո՞չ միայն Հրեաներէն, այլ նաեւ հեթանոսներէն, **25** ինչպէս Ովսէէի մէջ ալ կ'ըսէ. «Իմ ժողովուրդս չեղողը՝ “իմ ժողովուրդս՝ պիտի կոչեմ, ու սիրելի չեղողը՝ “սիրելին: **26** Եւ այն տեղը՝ ուր անոնց ըսուած էր. “Դուք իմ ժողովուրդս չէք□, հոն անոնք պիտի կոչուին “ապրող Աստուծոյ որդիները□: **27** Եսայի ալ հսրայելի մասին կ'աղաղակէ. «Նոյնիսկ եթէ

<sup>ա</sup> **Յուն.**՝ համեմատ

<sup>բ</sup> **Յուն.**՝ ո՞չ ուզողէն, ո՞չ ալ վազողէն

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

Իսրայէլի որդիներուն թիւը ծովու աւագին չափ ըլլայ, **միայն** մնացորդ մը պիտի փրկուի: **28** Քանի որ ան պիտի կատարէ **իր** խօսքը, կտրուկ կերպով եւ գարդարութեամբ. **Տէրը** կտրուկ կերպով պիտի իրագործէ **իր** խօսքը երկրի վրայ»: **29** Եւ ինչպէս Եսայի նախապէս ըսաւ. «Եթէ գօրքերու **Տէրը** զարմ մը թողուցած չըլլար մեզի, մենք պիտի ըլլայինք Սոդոմի պէս, ու պիտի նմանէինք Գոմորի»:

### ԻՍՐԱՅԵԼ ԵՒ ԱԻԵՏԱՐԱՆԸ

**30** Ուրեմն ի՞նչ ըսենք: **Հետեւեալը**, թէ հեթանոսները՝ որոնք հետամուտ չէին արդարութեան՝ հասան արդարութեան, այն արդարութեան՝ որ հաւատքէն է. **31** իսկ իսրայէլ՝ որ հետամուտ էր արդարութեան **Օրէնքին**՝ չհասաւ արդարութեան **Օրէնքին**: **32** Ինչո՞ւ որովհետեւ **ուզեց արդարանալ** ո՞չ թէ հաւատքով, հապա որպէս թէ **Օրէնքին** գործերով: Արդարեւ անոնք գայթեցան սայթաքումի քարին վրայ, **33** ինչպէս գրուած է. «Ահա՝ Սիոնի մէջ կը դնեմ սայթաքումի քար մը ու գայթակղութեան ժայռ մը, եւ ո՞վ որ հաւատայ անոր՝ ամօթահար պիտի չըլլայ»:

## 10

Եղբայրներ, սիրտիս բաղծանքն է, նաեւ Աստուծոյ **ուղղած** աղերսանքս՝ “իսրայէլի համար, որ անոնք փրկուին: **2** Որովհետեւ ես անոնց համար կը վկայեմ թէ նախանձախնդրութիւն ունին Աստուծոյ հանդէպ, բայց ո՞չ թէ գիտակցութեամբ: **3** Քանի որ՝ անգիտանալով Աստուծոյ արդարութիւնը եւ ջանալով հաստատել իրենց արդարութիւնը՝ անոնք չհպատակեցան Աստուծոյ արդարութեան: **4** Որովհետեւ Ջրիստոն է **Օրէնքին** վախճանը՝ ամէն հաւատացեալի արդարութեան համար:

### ՓՐԿՈՒԹԻՒՆԸ ԲՈԼՈՐԻՆ ՀԱՍԱՐ Է

**5** Արդարեւ Մովսէս **Օրէնքէն** եղող արդարութեան մասին կը գրէ. «**Այն** մարդը որ կը գործադրէ այդ բաները՝ պիտի ապրի անոնցմով»: **6** Բայց հաւատքէն եղող արդարութիւնը սա՝ կ'ըսէ. «Սի՝ ըսեր սիրտիդ մէջ. “Ո՞վ պիտի բարձրանայ երկինքը□, (այսինքն՝ Ջրիստոսը **վար** իշեցնելու,) **7** կամ. “Ո՞վ պիտի իշնէ անդունդը□ (այսինքն՝ Ջրիստոսը մեռելներէն **վեր** հանելու»): **8** Հապա ի՞նչ կ'ըսէ ան. «Խօսքը մօտ է քեզի, բերանիդ եւ սիրտիդ մէջ է»: այսինքն հաւատքին խօսքը՝ որ մենք կը քարոզենք: **9** Որովհետեւ եթէ բերանովդ Տէր դաւանիս թիսուսը, ու սիրտիդ մէջ հաւատաս թէ Աստուծած մեռելներէն յարուցանեց զայն՝ պիտի փրկուիս. **10** (որովհետեւ սիրտով կը հաւատայ մէկը՝ արդարանալու **համար**, ու բերանով կը դաւանի՝ փրկուելու **համար**:) **11** Քանի որ Գիրքը կ'ըսէ. «Ո՞վ որ անոր հաւատայ՝ ամօթահար պիտի չըլլայ»: **12** Արդարեւ խտրութիւն չկայ Հրեային ու Յոյնին միջեւ, որովհետեւ բոլորին վրայ **եղող** նոյն Տէրը ճոխութեամբ **կը հասնի** բոլոր անոնց՝ որ զինք կը կանչեն: **13** Քանի որ “ո՞վ որ Տէրոց անունը կանչէ՝ պիտի փրկուի□:

**14** Ուրեմն ի՞նչպէս պիտի կանչեն զայն՝ որուն հաւատացած չեն. կամ ի՞նչպէս պիտի հաւատան անոր՝ որուն մասին լսած չեն. կամ ի՞նչպէս պիտի լսեն՝ առանց քարոզիչի: **15** Կամ ի՞նչպէս պիտի քարոզեն՝ եթէ չղրկուին, ինչպէս գրուած է. «Ի՞նչ գեղեցիկ են

\* Յուն. հնագոյն ձեռ. չունին՝ արդարութեամբ

“ Ոմանք՝ անոնց

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

ոտքերը անոնց՝ որոնք խաղաղութիւն կ'աւետեն, բարի բաներ կ'աւետեն»։ **16** Բայց բոլորը չհնագանդեցան աւետարանին, քանի որ Եսայի կ'ըսէ. «Տէ՛ր, ո՞վ հաւատաց մեր **տուած** լուրին»։ **17** Ուրեմն հաւատըը կու գայ լսելէն, ու լսելը՝ Աստուծոյ խօսքէն։ **18** Բայց կ'ըսեմ. «Միթէ չլսեցի՞ն: Անկասկած. “Անոնց հնչինը գնաց ամբո՞ղջ երկիրը, եւ անոնց խօսքը՝ մինչեւ երկրագունդին ծայրերը”»։ **19** Բայց կ'ըսեմ. «Միթէ հսրայէլ չգիտցա՞ւ»։ Նախ Մովսէս կ'ըսէ. «Ես պիտի գրգռեմ ձեր նախանձը՝ բանպիտան ազգով” մը, պիտի բարկացնեմ ձեզ անխելք ազգով մը»։ **20** Բայց Եսայի շատ յանդուզն է, ու կ'ըսէ. «Ես գտնուեցայ անոնցմէ՝ որոնք չէին փնտռեր զիս, յայտնուեցայ անոնց՝ որոնք չէին հարցներ իմ մասիս»։ **21** Սակայն հսրայէլի համար կ'ըսէ. «Ամբողջ օրը երկարեցի իմ ձեռքերս՝ չանացող եւ հակաճառող ժողովուրդի մը»։

### ԱՍՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ ԻՍՐԱՅԵԼԻ

#### 11

Ուրեմն կ'ըսեմ. «Միթէ Աստուած վանե՞ց իր ժողովուրդը»։ Ամե՛նելին. որովհետեւ ե՛ս ալ հսրայելացի եմ, Աբրահամի զարմէն, Բենիամինի տոհմէն։ **2** Աստուած չվանեց իր ժողովուրդը, որ նախապէս ճանչցած էր։ Միթէ չէ՞ք գիտեր թէ Գիրքը ի՞նչ կ'ըսէ Եղիայի մասին, թէ ի՞նչպէս ան կը գանգատէր Աստուծոյ՝ հսրայէլի դէմ, ըսելով։ **3** «Տէ՛ր, քու մարգարէներդ սպաննեցին ու քու գոհասեղաններդ փլցուցին. Ես մինակ մնացած եմ, եւ իմ անձս ալ կը փնտռեն»։ **4** Բայց ի՞նչ կ'ըսէ անոր Աստուծոյ պատգամը. «Ինծի պահեցի եօթը հազար մարդ, որոնք Բահաղի չծնրադրեցին»։ **5** Նոյնպէս ալ այս ներկայ ատենը մնացորդ մը կայ՝ շնորհքի ընտրութեան համաձայն։ **6** Եւ եթէ շնորհքով է, ուրեմն ալ գործերէն չէ. այլապէս՝ շնորհքը ալ շնորհք չ'ըլլար: “Իսկ եթէ գործերէն է, ալ շնորհք չէ. այլապէս՝ գործը ալ գործ չ'ըլլար:” **7** Ուրեմն ի՞նչ. հսրայէլ չհասաւ այն բանին՝ որ կը փնտռէր. սակայն ընտրուածնե՛րը հասան անոր, իսկ միւսները կուրցան **8** (ինչպէս գրուած է. «Աստուած անոնց տուաւ թմրութեան ոգի. աչքեր՝ որ չտեսնեն, եւ ականջներ՝ որ չլսեն».) մինչեւ այսօր։ **9** Ու Դակիթ կ'ըսէ. «Անոնց սեղանը վարմ, որոգայթ, գայթակղութիւն եւ հատուցում թող ըլլայ իրենց։ **10** Անոնց աչքերը թող խաւարին՝ որպէսզի չտեսնեն, եւ անոնց կոնակը ամէ՛ն ատեն վար ծոէ»։ **11** Ուրեմն կ'ըսեմ. «Միթէ անոնք սայթաքեցան՝ որպէսզի իյնա՞ն»։ Ամե՛նելին։ Հապա՝ փրկութիւնը հասաւ հեթանոսներուն անոնց անկումով, որպէսզի գրգռէ անոնց նախանձը։ **12** Ուստի եթէ անոնց անկումը աշխարհի հարստութիւն եղաւ, եւ անոնց նուաստացումը՝ հեթանոսներուն հարստութիւն, ալ ո՛րչափ աւելի՝ անոնց լիութիւնը։

### ՀԵԹԱՆՈՍՆԵՐՈՒՆ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

**13** Բայց ձեզի՝ հեթանոսներուդ կ'ըսեմ. «Քանի որ հեթանոսներուն առաքեալն եմ՝ կը փառաւորեմ իմ սպասարկութիւնս, **14** բյուսալով բարի նախանձը գրգռել իմ մարմիննս եղողներուն, եւ փրկել անոնցմէ ոմանք»։ **15** Որովհետեւ եթէ անոնց մեկուսացուիլը աշխարհի հաշտութիւն եղաւ, հապա ի՞նչ պիտի ըլլայ անոնց վերստին ընդունուիլը, եթէ ոչ՝ կեանք մեռելներէն։ **16** Ուրեմն՝ եթէ երախայրիքը սուրբ է, նոյնն է նաեւ զանգուածը. ու

<sup>բ</sup> **ՅուԱ.**՝ ոչ-ազգով

<sup>ս</sup> **Ոմանք չունին**

<sup>բ</sup> **ՅուԱ.**՝ որպէսզի թերեւս

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

Եթէ արմատը սուրբ է, **ուրեմն** ճիւղերն ալ: **17** Եթէ **այդ** ճիւղերէն ոմանք կտրուեցան, ու դո՛ւն՝ որ վայրի ծիթենի էիր, պատուաստուեցար անոնց մէջտեղ եւ հաղորդակից եղար անոնց հետ ծիթենիին արմատին ու պարարտութեան, **18** մի՛ պարծենար ճիւղերուն դէմ: Իսկ եթէ պարծենաս, **գիտցի՛ր թէ** դո՛ւն չես որ կը կրես արմատը, հապա արմատը՝ քեզ: **19** Ուրեմն պիտի ըսես. «Ճիւղերը կտրուեցան՝ որպէսզի ես պատուաստուիմ»: **20** Լա՛. անոնք կտրուեցան անհաւատութեան պատճառով, ու դուն հաստատ մնացած ես հաւատքով: **Մեծամիտ** մի՛ ըլլար, հապա վախցի՛ր. **21** որովհետեւ եթէ Աստուած չխնայեց բնական ճիւղերուն, գուցէ չխնայէ նաեւ քեզի: **22** Ուրեմն տե՛ս Աստուծոյ քաղցրութիւնն ու խստութիւնը. խստութիւն՝ ինկածներուն հանդէպ, իսկ բարութիւն՝ քեզի հանդէպ, եթէ յարատեւես անոր քաղցրութեան մէջ. այլապէս՝ դո՛ւն ալ պիտի կտրուիս: **23** Իսկ անոնք ալ պիտի պատուաստուին՝ եթէ չմնան **իրենց** անհաւատութեան մէջ, որովհետեւ Աստուած կարող է դարձեալ պատուաստել զանոնք: **24** Քանի որ եթէ դուն կտրուեցար այն ծիթենիին՝ **որ** բնութեամբ վայրի էր, եւ հակառակ բնութեան՝ պատուաստուեցար լաւ ծիթենիի մը վրայ, ա՛լ ո՛չչափ աւելի ասոնք՝ որ բնական **ճիւղերն** են, պիտի պատուաստուին **իրենց սեփական** ծիթենիին վրայ:

### ԱՍՈՒԾՈՅ ՈՂՈՐՄՈՒԹԻՒՆԸ ԲՈԼՈՐԻՆ

**25** Որովհետեւ չեմ ուզեր, եղբայրներ, որ անգիտանաք սա՛ խորհուրդին, (որպէսզի դուք ծեզ իմաստուն չսեպէք,) թէ մասնակի կուրութիւն պատահեցաւ հսրայէլի, մինչեւ որ ներս մտնէ հեթանոսներուն լիութիւնը: **26** Եւ այսպէս՝ ամբողջ հսրայէլը պիտի փրկուի, ինչպէս գրուած է. «Ազատարարը Սիոնէն պիտի գայ, ու Յակոբէն պիտի հեռացնէ ամբարշտութիւնը: **27** Եւ ա՛յս է իմ ուխտս անոնց հետ, երբ քաւեմ անոնց մեղքերը»: **28** Աւետարանին համաձայն՝ անոնք թշնամիներ են ծեր պատճառով. բայց ընտրութեան համաձայն՝ սիրելի են **իրենց** հայրերուն պատճառով, **29** քանի որ Աստուծոյ <sup>գ</sup>շնորհներն ու կոչումը անդառնալի են: **30** Որովհետեւ ինչպէս ժամանակին դուք **ալ չէիք** հնազանդեր Աստուծոյ, բայց հիմա ողորմութիւն գտաք <sup>Դ</sup>անոնց անհնազանդութեամբ, **31** նոյնպէս անոնք ալ հիմա չհնազանդեցան, որպէսզի անոնք ալ ողորմութիւն գտնեն ծեր **գտած** ողորմութեամբ «: **32** Որովհետեւ Աստուած ներփակեց բոլորը անհնազանդութեան մէջ, որպէսզի ողորմի բոլորին:

### ԳՈՎԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՍՈՒԾՈՅ

**33** «Ո՞վ Աստուծոյ ճոխութեան, իմաստութեան ու գիտութեան խորութիւնը. ի՞նչպէս անցնելի են իր դատաստանները, եւ անզնելի՝ իր ճամբանները: **34** Որովհետեւ ո՞վ գիտցաւ Տէրոց միտքը, կամ ո՞վ անոր խորհրդատու եղաւ: **35** Կամ ո՞վ նախապէս անոր տուաւ բան մը, որ հատուցանուի իրեն»: **36** Որովհետեւ անկէ, անով եւ անորն են բոլոր բանները, որուն փա՛ռք յալիտեան: Ամէն:

### ԿԵԱՆՔ ԱՍՈՒԾՈՅ ԾԱՐԱՅՈՒԹԵԱՆ ՄԷԶ

**12**

<sup>գ</sup> **Այսիհքը**՝ շնորհած պարգևներն

<sup>դ</sup> **Կամ**անոնց անհնազանդութեան ատեն, նոյնպէս անոնք ալ հիմա չհնազանդեցան, որպէսզի անոնք ալ ողորմութիւն գտնեն ծեր ողորմութիւն **գտած** ատենը

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

Ուրեմն կ'աղաքեմ ծեզի, եղբայրներ, Աստուծոյ ՚կարեկցութեամբ, որ ծեր մարմինները ներկայացնէք **որպէս** ապրող զոհ մը՝ սուրբ, աստուածահաճոյ. **այդ է** ծեր բանական պաշտամունքը: **2** Եւ մի՛ համակերպիք այս աշխարհին, հապա փոխակերպուեցէք ծեր միտքին նորոգութեամբ, որպէսզի քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը, որ բարի, հաճելի եւ կատարեալ է: **3** Քանի որ ինձի տրուած ՚շնորհքով կ'ըսեմ ծեզմէ ամէն մէկուն, որ **իր մասին** աւելի բարձր համարում չունենայ՝ քան ինչ որ պէտք է մտածէ, հապա խոհեմութեամբ մտածէ, հաւատքի չափին համեմատ՝ **որ** Աստուած բաշխած է իւրաքանչիւրին: **4** Որովհետեւ ինչպէս մէկ մարմինի մէջ ունինք շատ անդամներ, եւ **այդ** բոլոր անդամները միեւնոյն պաշտօնը չունին, **5** նոյնպէս մենք՝ շատ **ըլլալով**՝ մէկ մարմին ենք Թրիստոսով, եւ իւրաքանչիւրս՝ իրարու անդամներ: **6** Ուստի՝ ունենալով ՚շնորհներ, որոնք կը տարբերին այն ՚շնորհին համեմատ՝ որ մեզի տրուած է, եթէ մարգարէութիւն **է՝ մարգարէանանք** հաւատքին համեմատութեամբ, **7** եթէ սպասարկութիւն՝ սպասարկենք. ա՛ն որ կը սորվեցնէ՝ **թող յարատելէ** սորվեցնելով, **8** ա՛ն որ կը յորդորէ՝ յորդորելով. ա՛ն որ կը բաշխէ՝ **թող յարատելէ** պարզամտութեամբ, ա՛ն որ վերակացու է՝ փութաջանութեամբ, ա՛ն որ կ'ողորմի՝ ուրախութեամբ: **9** Սէրը **թող ըլլայ** առանց կեղծիքի. չարէն զգուեցէք, բարիին յարեցէք: **10** Իրարու հանդէպ գորովալի՛ց եղէք՝ եղբայրական սիրով. պատուելու մէջ՝ զիրա՛ր գերադասեցէք: **11** Փութաջանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդո՛ւն հոգիով **Տէրոց ծառայեցէք:** **12** Յոյսո՛վ ուրախացէք. տառապանքի մէջ համբերեցէք. աղօթքի մէջ յարատենեցէք: **13** Սուրբերու կարիքներուն հաղորդակի՛ց եղէք. հիւրասիրութեան հետամո՛ւտ եղէք: **14** Զեզ հալածողները օրհնեցէք. օրհնեցէք եւ մի՛ անհծէք: **15** Ուրախացողներուն հետ ուրախացէք, ու լացողներուն հետ լացէք: **16** Իրարու հանդէպ միեւնոյն մտածումը ունեցէք: Բարձր բաներու վրայ մի՛ մտածէք, հապա ՚խոնարհեցէք դէպի նուաստները. դուք ծեզ իմաստուն մի՛ սեպէք: **17** Չարիքի փոխարէն չարիք մի՛ հաստուցանեցէք ունէ մէկուն. մտադրեցէք **ընել** ինչ որ պարկեշտ է բոլոր մարդոց առջեւ: **18** Որչափ կարելի է ծեզի՝ խաղաղութիւն պահեցէք ամէն մարդու հետ: **19** Սիրելիներ, վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ծեզի համար, հապա տե՛ղ տուէք **Աստուծոյ** բարկութեան. որովհետեւ գրուած է. «Վրէժխնդրութիւնը ի՞մս է, ե՞ս պիտի հատուցանեմ, – կ'ըսէ **Տէրը»: **20** Ուրեմն «եթէ քու թշնամիդ անօթեցած է՝ սնուցանէ՝ զայն, ու եթէ ծարաւցած է՝ խմցուր անոր. քանի որ այսպէս ընելով՝ կրակի կայծեր պիտի կուտակես անոր գլուխին վրայ»: **21** Չարէն մի՛ յաղթուիր, հապա բարիո՛վ յաղթէ չարին:**

## ՀՊԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԻԾԽԱՆՈՒԹԻՒՆԵՐՈՒՆ

### 13

Ամէն անձ թող հպատակի **իր** վրայ եղած իշխանութիւններուն. որովհետեւ չկայ իշխանութիւն մը՝ որ Աստուծմէ չըլլայ, եւ ՚անոնք որ կան՝ կարգուած են Աստուծմէ: **2**

<sup>ա</sup> **Յուն.**՝ արգահատանքով

<sup>բ</sup> **Ոմանք**՝ Աստուծոյ ՚շնորհքով

<sup>գ</sup> **Այսինքն**՝ ՚շնորհուած պարգևներ

<sup>դ</sup> **Այսինքն**՝ օրհնութեան

<sup>ե</sup> **Յուն.**՝ զիշանեցէք

<sup>ա</sup> **Ոմանք**՝ այն իշխանութիւնները

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

Հետեւաբար ո՞վ որ կ'ընդդիմանայ իշխանութեան, կը դիմադրէ Աստուծոյ կարգադրութեան. եւ անոնք որ կը դիմադրեն՝ իրենք զիրենք կը դատապարտեն։ **3** Քանի որ իշխանները՝ բարի գործերու համար վախ չեն **ազդեր**, հապա՝ չար գործերու։ Ուստի կ'ուզե՞ս չվախնալ իշխանութենէն. բարին գործէ, եւ գովեստ պիտի ընդունիս անկէ։ **4** Որովհետեւ ան Աստուծոյ սպասարկուն է քեզի համար՝ որ բարին **գործես**. բայց եթէ չա՛րը գործես՝ վախցի՛ր, քանի որ զուր տեղը չէ որ սուր կը կրէ **մէջքը**. որովհետեւ Աստուծոյ սպասարկուն է, եւ Վրէժինդիր՝ բարկութիւն **հասցնելու** անոր վրայ՝ որ չարիք կը գործէ։ **5** Ուստի հա՛րկ է հապատակիլ. ո՛չ միայն բարկութեան համար, այլ նաեւ խղճմտանքի համար։ **6** Այս պատճառով է որ տուրք ալ կը վճարէք. որովհետեւ Աստուծոյ պաշտօնեաններն են՝ բուն այս բանին գյատկացուած։ **7** Ուրեմն հատուցանեցէ՛ք բոլորին ինչ որ կը պարտիք. որո՛ն որ տուրք **տրուելու է**՝ տուրքը, որո՛ն որ մաքս՝ մաքսը, որո՛ն որ վախ՝ վախը, որո՛ն որ պատիւ՝ պատիւը։

### ԻՐԱՐՈՒ ՀԱՆԴԵՊ ՍԵՐ

**8** Ո՛չ մէկ պարտք ունեցէք ոեւէ մէկուն, բացի զիրար սիրելէ. որովհետեւ ո՞վ որ կը սիրէ ընկերը՝ գործադրած կ'ըլլայ Օրէնքը։ **9** Արդարեւ այն **ըսուածը**. «Ճնութիւն մի՛ ըներ, սպանութիւն մի՛ ըներ, գողութիւն մի՛ ըներ, սուտ վկայութիւն մի՛ տար, մի՛ ցանկար», եւ եթէ **կայ** ուրիշ որեւէ պատուիրան՝ համառօտաբար կը բովանդակուի սա՛ խօսքին մէջ. «Սիրէ՛ ընկերդ ոքու անձիդ՝ պէս»։ **10** Սէրը ո՛չ մէկ չարիք կը գործէ իր ընկերին. ուրեմն սէ՛րն է Օրէնքին գործադրութիւնը։

**11** Նաեւ գիտնանք ատենը՝ թէ արդէն ժամն է քունէն արթննալու, որովհետեւ հիմա մեր փրկութիւնը աւելի՛ մօտ է՝ քան երբ հաւատացինք։ **12** Գիշերը շատ յառաջացած է, ու ցերեկը՝ մօտեցած. ուրեմն թօթափենք խաւարին գործերը, ու հագնինք լոյսին գրահը։ **13** Վայելչութեամբ ընթանանք, ինչպէս ցերեկ ատեն, ո՛չ թէ զեխութեամբ ու արբեցութեամբ, ո՛չ թէ **խառնակ** անկողինով եւ ցոփութեամբ, ո՛չ թէ կոհիով ու նախանձով։ **14** հապա հագէ՛ք Տէր Յիսուս Քրիստոսը, եւ մի՛ մտադրէք մարմինին ցանկութիւնները **գոհացնել**։

### ԵՂԲԱՅՐԸ ԶԴԱՏԵԼ

## 14

Ճնդունեցէ՛ք հաւատքի մէջ տկար եղողը՝ առանց քննադատելու կարծիքները. **2** քանի որ մէկը կը հաւատայ թէ ամէն բան կրնայ ուտել, **իսկ** ուրիշ մը՝ որ տկար է՝ բանցարեղէն կ'ուտէ։ **3** Ան որ կ'ուտէ՝ թող չանարգէ չուտողը, եւ ան որ չ'ուտէր՝ թող չդատէ ուտողը, որովհետեւ Աստուած ընդունած է զայն։ **4** Դուն ո՞վ ես՝ որ կը դատես ուրիշին ծառան. հաստատուն կենայ կամ իյնայ՝ իր իսկական Տէրոց համար **է**: Բայց կանգուն պիտի պահուի, որովհետեւ **Աստուած կարող է կանգուն պահել** զայն։ **5** Սէկը կը նկատէ օր մը ուրիշէ մը **գերադաս**, միւսն ալ կը նկատէ բոլոր օրերը **հաւատար**. իւրաքանչիւրը լման

<sup>բ</sup> **Յուն.**՝ դատաստան պիտի ստանան իրենց համար

<sup>գ</sup> **Յուն.**՝ տրամադրուած

<sup>դ</sup> **Յուն.**՝ քեզի

<sup>ե</sup> **Ոմանք**՝ Տէրը

<sup>բ</sup> **Յուն.**՝ աւելի

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՒՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

համոզուած թող ըլլայ իր միտքին մէջ: **6** ԱՇ որ համարում կ'ընծայէ մէկ օրուան՝ Տէրո՛ց համար համարում կ'ընծայէ, իսկ ա՛ն որ համարում չ'ընծայեր մէկ օրուան, Տէրո՛ց համար համարում չ'ընծայեր: ԱՇ որ կ'ուտէ՝ Տէրո՛ց համար կ'ուտէ, քանի որ Աստուծմէ շնորհակալ կ'ըլլայ. իսկ ա՛ն որ չ'ուտեր, Տէրո՛ց համար չ'ուտեր, բայց Աստուծմէ շնորհակալ կ'ըլլայ: **7** Արդարեւ մեզմէ ո՛չ մէկը ինքնիրեն համար կ'ապրի, կամ ինքնիրեն համար կը մեռնի. **8** քանի որ եթէ ապրինք՝ Տէրո՛ց համար կ'ապրինք, ու եթէ մեռնինք՝ Տէրո՛ց համար կը մեռնինք: Ուրեմն թէ՝ ապրինք եւ թէ մեռնինք՝ մենք Տէրո՛ցն ենք: **9** Որովհետեւ Թրիստոս սա՛ նպատակով մեռաւ գու վերապրեցաւ, որպէսզի Տէր ըլլայ թէ՝ մեռելներուն եւ թէ ողջերուն: **10** Իսկ դուն ինչո՞ւ կը դատես եղբայրդ, կամ ինչո՞ւ կ'անարգես եղբայրդ, քանի բոլորս ալ պիտի ներկայանանք Թրիստոսի դատարանը: **11** Արդարեւ գրուած է. «Ես կ'ապրի՞մ, – կ'ըսէ Տէրը. – ամէն ծունկ պիտի կը իմ առջեւս, եւ ամէն լեզու պիտի դաւանի զիս իբր Աստուծած»: **12** Ուրեմն մեզմէ իւրաքանչիւրը հաշիւ պիտի տայ Աստուծոյ՝ ինքնիրեն համար:

## ԵՂԲԱՅՐԸ ԶԳԱՅԹԱԿՂԵՑՆԵԼ

**13** Ուստի ա՛լ չդատենք զիրար. այլ մանաւանդ սա՛ վճռեցէք, որ ո՛չ մէկը սայթաքում կամ գայթակղութիւն դնէ **իբ** եղբօր առջեւ: **14** Գիտե՞մ, ու համոզուած եմ Տէր Յիսուսով, թէ ոչինչ ինքնիրմէ պիղծ է. բայց ո՛վ որ պիղծ կը սեպէ որեւէ բան, անո՞ր համար պիղծ է ատիկա: **15** Սակայն եթէ եղբայրդ տրտմի կերակուրի համար, ա՛լ սիրով չես ընթանար. քու կերակուրովդ մի՛ կորսնցներ ա՛ն՝ որուն համար Թրիստոս մեռաւ: **16** Ուրեմն հայհոյութիւն թող ըլլայ ձեր բարիին համար, **17** քանի որ Աստուծոյ թագաւորութիւնը կերակուր ու խմելիք չէ, հապա արդարութիւն, խաղաղութիւն եւ ուրախութիւն՝ Սուրբ Հոգիով: **18** Արդարեւ ո՛վ որ այս կերպով Թրիստոսի կը ծառայէ՝ Աստուծոյ հաճելի ու մարդոցմէ գնահատուած է: **19** Ուրեմն հետամո՛ւտ ըլլանք այն բաներուն՝ որոնք խաղաղութիւն կը հայթայթեն, եւ այն բաներուն՝ որոնցմով շինութիւն կ'ըլլայ իրարու: **20** Մի՛ քանդէք Աստուծոյ գործը կերակուրի համար: Արդարեւ բոլոր բաները մաքուր են. սակայն գէշ են այն մարդուն համար՝ որ կ'ուտէ գայթակղեցնելով: **21** Լաւ է ո՛չ միս ուտել, ո՛չ գինի խմել, ո՛չ ալ **որեւէ բան ընել**, որով եղբայրդ կը սայթաքի, կը գայթակղի կամ կը տկարանայ: **22** Դուն հաւա՞տք ունիս. քեզի՛ վերապահէ զայն՝ Աստուծոյ առջեւ. երանի՛ անոր, որ չի դատապարտեր ինքզինք անով՝ որ ինք կը գնահատէ<sup>1</sup>: **23** Բայց ա՛ն որ կը տատամսի, եթէ ուտէ՝ կը դատապարտուի, քանի որ հաւատքով չէ որ կ'ուտէ. արդարեւ ամէն ինչ որ հաւատքով չէ՝ մեղք է:

## ՈՒՐԻՇՆԵՐԸ ՀԱՅԵՑՆԵԼ, Ո՛Չ ԹԷ ԻՆՔՋԻՆՔ

### 15

Ուստի մենք, որ զօրաւոր ենք, պարտաւոր ենք կրել տկարներուն տկարութիւնը, եւ ո՛չ թէ հաճեցնել մենք մեզ: **2** Մեզմէ իւրաքանչիւրը թող հաճեցնէ իր ընկերը՝ շինութեան

<sup>1</sup> **Ումանք**՝ ու յարութիւն առաւ, եւ

<sup>2</sup> **Յուն.**՝ սայթաքեցնելով

<sup>3</sup> **Յուն.**՝ դատեր

<sup>4</sup> **Կամ** կը փորձէ

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

համար, **անոր** բարիքին համար: **3** Զանի որ Ջրիստոս ալ չհաճեցուց ինքզինք, հապա՝ ինչպէս գրուած է. «**Ձեզ** անարգողներուն նախատինքները ինկան իմ վրաս»: **4** Որովհետեւ նախապէս գրուած ամէն ինչ՝ գրուեցաւ որ մենք սորվինք, որպէսզի յոյս ունենանք՝ համբերութեամբ ու Գիրքերուն մխիթարութեամբ: **5** Ուրեմն համբերութեան ու մխիթարութեան Աստուածը թող շնորհէ ձեզի համախոհ ըլլալ իրարու հետ՝ Ջրիստոս Յիսուսի համաձայն, **6** որպէսզի միաբան ու միաբերան փառաբանէք Աստուած, մեր **Տէրոց**՝ Յիսուս Ջրիստոսի Հայրը: **7** Ուստի ընդունեցէք զիրար, ինչպէս Ջրիստոս ալ ընդունեց **մեզ**՝ Աստուծոյ փառքին համար:

## ԱԻԵՏԱՐԱՆԸ ՀԵԹԱՆՈՍՆԵՐՈՒՆ

**8** Արդարեւ կ'ըսեմ թէ Յիսուս Ջրիստոս սպասարկու եղաւ թլիատութեան՝ Աստուծոյ ճշմարտութեան համար, որպէսզի հաստատէ նախահայրերուն **տրուած** խոստումները **9** եւ հեթանոսները Աստուած փառաբանեն՝ **իր** ողորմութեան համար, ինչպէս գրուած է. «Ասոր համար պիտի ճերբողեմ քեզ հեթանոսներուն մէջ, եւ սաղմոս պիտի երգեմ քու անունիդ»: **10** Դարձեալ կ'ըսէ. «Դեթանոսներ՝, ուրախացէք անոր ժողովուրդին հետ»: **11** Եւ դարձեալ. «Գովարանեցէք **Տէրը**, բոլոր հեթանոսներ, ու գովեցէք զայն, բոլոր ժողովուրդներ»: **12** Դարձեալ Եսայի կ'ըսէ. «Ճեսսէի մէկ արմատը պիտի ըլլայ, եւ կանգնելով՝ հեթանոսներուն վրայ պիտի իշխէ. անոր պիտի յուսան հեթանոսները»: **13** Ուրեմն յոյսի Աստուածը թող լեցնէ ձեզ ամէն ուրախութեամբ ու խաղաղութեամբ՝ ձեր հաւատքին համեմատ, որպէսզի ձեր յոյսը առատանայ Սուրբ Հոգիին զօրութեամբ:

## ՊՈՂՈՍԻ ՀԱՄԱՐՁԱԿՈՒԹԵԱՄԲ ԳՐԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌԸ

**14** Ես ինքս ալ համոզուած եմ ձեր մասին, իմ եղբայրներս, թէ դուք ալ լի էք բարութեամբ, ամէն գիտութեամբ լեցուած, եւ կրնաք զիրար խրատել: **15** Սակայն, եղբայրներ, կերպով մը աւելի՝ յանդգնութեամբ գրեցի ձեզի, իբր թէ յիշեցնելով ձեզի, Աստուծմէ ինձի տրուած շնորհքին պատճառով՝ **16** որ Յիսուս Ջրիստոսի պաշտօնեան ըլլամ հեթանոսներուն մէջ, Աստուծոյ աւետարանին քահանայութիւնը կատարելով, որպէսզի հեթանոսները ըլլան ընդունելի երնծայ՝ Սուրբ Հոգիով սրբացած: **17** Ուրեմն Ջրիստոս Յիսուսի միջոցով **պատճառ** ունիմ պարծենալու Աստուծոյ վերաբերող բաներուն մէջ: **18** Բայց չեմ յանդգնիր խօսիլ այն բաներէն որեւէ մէկուն մասին, որ Ջրիստոս ինձմով գործադրած չէ հեթանոսները հնազանդեցնելու համար, խօսքով ու գործով, **19** զօրաւոր նշաններով ու սքանչելիքներով, **Աստուծոյ Հոգիին** զօրութեամբ. այնպէս որ, **սկսելով** երուսաղէմէն եւ **անոր** շրջակայքէն՝ մինչեւ հլլիւրիկում, լիովին քարոզեցի Ջրիստոսի աւետարանը: **20** Այսպէս, պատիւ համարեցի աւետարանել **հոգ**՝ ուր Ջրիստոս

<sup>ա</sup> **Յուն.**՝ նախատողներուն

<sup>բ</sup> **Ոմանք**՝ ձեզ

<sup>գ</sup> **Յուն.**՝ դաւանիմ

<sup>դ</sup> **Կամ**՝ Ազգեր

<sup>ե</sup> **Կամ**՝ պատարագ

<sup>գ</sup> **Ոմանք**՝ Սուրբ

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

Էքարողուած չէր, որպէսզի ուրիշի մը **դրած** հիմին վրայ չկառուցանեմ, հապա՝ ինչպէս գրուած է. **21** «Անոնք՝ որոնց չէր պատմուած անոր մասին՝ պիտի տեսնեն, եւ անոնք որ չէին լսած՝ պիտի հասկնան»:

## ՊՈՂՈՍԻ ԾՐԱԳԻՐԸ ՀՈՌՄԱՅՑԵԼԵԼՈՒ

**22** Ասոր համար ալ շատ անգամ արգիլուեցայ ձեզի գալէ: **23** Իսկ հիմա, այս կողմերը այլեւս **քարոզելու** տեղ չունենալով, ու շատ տարիներէ ի վեր տենալով ձեզի գալ, **24** երբ դէպի Սպանիա ճամբորդեմ՝ կը յուսամ ճամբորդութեանս ընթացքին ձեզի հանդիպիլ, ու ձեզմէ ուղարկուած հոն **երթալ**, անշուշտ նախ ձեզմով մասամբ յագենալէ ետք: **25** Իսկ հիմա Երուսաղէմ կ'երթամ՝ սուրբերուն սպասարկելու: **26** Որովհետեւ Մակեդոնացիներն ու Աքայիացիները բարեհաճեցան հաղորդակից ըլլալ Երուսաղէմ եղող աղքատ սուրբերու **կարիքներուն**: **27** Իսկապէս բարեհաճեցան, եւ անոնց պարտական ալ են: Որովհետեւ եթէ հեթանոսները հաղորդակցեցան անոնց հոգեւոր բաներուն, պարտաւոր են նաեւ **Պօգնել** անոնց՝ մարմնաւոր բաներուն մէջ: **28** Ուրեմն երբ կատարեմ ասիկա եւ կնքեմ անոնց այս պտուղը, Սպանիա պիտի երթամ ձեր քովէն **անցնելով**: **29** Եւ գիտեմ թէ երբ գամ ձեզի՝ պիտի գամ Թրիստոսի **աւետարանին** օրհնութեան լիութեամբ:

**30** Կ'աղացեմ ձեզի, եղբայրներ, մեր **Տէրոջմով՝ Յիսուս Թրիստոսվ** ու **Հոգիին սիրով**, որ պայքարիք ինծի հետ ձեր աղօթքներուն մէջ՝ **որոնք** Աստուծոյ **ուղղուած են** ինծի համար, **31** որպէսզի ազատիմ Հրէաստանի անհնազանդներէն, եւ սուրբերէն ընդունուի Երուսաղէմի մէջ **ընելիք** իմ սպասարկութիւնս, **32** ու ես ուրախութեամբ գամ ձեզի Աստուծոյ կամքով, եւ հանգստանամ ձեզի հետ: **33** Խաղաղութեան Աստուածը ձեր բոլորին հետ: Ամէն:

## ԱՆՁՆԱԿԱՆ ԲԱՐԵՒՆԵՐ

### 16

Ձեզի կը յանձնարարեմ մեր Փիբէ քոյրը, որ Կենքրեայի Եկեղեցիին սարկաւագուհին է. **2** որպէսզի ընդունիք զինք **Տէրոջմով՝ ինչպէս արժանավայել** է սուրբերուն, եւ օգնէք անոր՝ ի՞նչ բանի մէջ որ պէտք ունենայ ձեզի. քանի որ ինք շատերու հոգատար եղաւ, նաեւ ինծի:

**3** Բարեւեցէք Պրիսկէն եւ Ակիւղասը՝ Թրիստոս Յիսուսով իմ գործակիցներս, **4** (որոնք **Վտանգի** մէջ դրին իրենց վիզերը՝ իմ անձիս համար. որոնցմէ ո՛չ միայն ես շնորհակալ եմ, հապա նաեւ հեթանոսներուն բոլոր Եկեղեցիները,) **5** Ամանապէս Եկեղեցին՝ որ անոնց տան մէջ է: Բարեւեցէք Եպենետոսը՝ իմ սիրելիս, որ **Աքայիայի Երախայրիքն** է Թրիստոսի **համար**: **6** Բարեւեցէք Մարիամը, որ շատ աշխատեցաւ մեզի համար: **7** Բարեւեցէք

<sup>է</sup> **Յուն.**՝ անուանուած

<sup>բ</sup> **Ոմանք**՝ ձեզի պիտի գամ. որովհետեւ կը յուսամ

<sup>բ</sup> **Յուն.**՝ ծառայել

<sup>Ժ</sup> **Ոմանք** չունին

<sup>ա</sup> **Յուն.**՝ սպասարկուն

<sup>բ</sup> **Կամ** Ասիայի

## ՊՈՂՈՍԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՌՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ

Անդրոնիկոսն ու Յունիան, իմ ազգականներս ու գերութեան ընկերներս, որոնք երեւելի են առաքեալներուն մէջ եւ Թրիստոսի պատկանեցան ինձմէ ալ առաջ: **8** Բարեւեցէ՛ք Ամպղիան՝ իմ սիրելիս Տէրոշմով: **9** Բարեւեցէ՛ք Ուլրանոսը՝ մեր գործակիցը Թրիստոսով, եւ Ստաքէսը՝ իմ սիրելիս: **10** Բարեւեցէ՛ք Ապեղեսը, **որ** գնահատուած **է** Թրիստոսով: **11** Բարեւեցէ՛ք անոնք՝ որ Արիստարուղոսի **տունէ՛ց** են: Բարեւեցէ՛ք Հերովդիոնը՝ իմ ազգականս: Բարեւեցէ՛ք Նարկէսի **տունէ՛ց** եղողները՝ որոնք Տէրոշն են: **12** Բարեւեցէ՛ք Տրիփոնը եւ Տրիփոսը, որոնք կ'աշխատին Տէրոշմով: Բարեւեցէ՛ք սիրելի Պերսիդէն, որ շատ աշխատեցաւ Տէրոշմով: **13** Բարեւեցէ՛ք Ուուփոսը՝ Տէրոշմով ընտրեալը, եւ անոր մայրը՝ **որ** իմս **ալ է:** **14** Բարեւեցէ՛ք Ասինկրիտոսը, Փղեգոնը, Հերմասը, Պատրոբան, Հերմէսն ու անոնց հետ եղող եղբայրները: **15** Բարեւեցէ՛ք Փիղողոգոսը եւ Յուզիան, Ներէսն ու անոր քոյրը, Ողիմպասը եւ անոնց հետ եղող բոլոր սուրբերը: **16** Բարեւեցէ՛ք զիրար սուրբ համբոյրով: Թրիստոսի (բոլոր) **եկեղեցիները** կը բարեւեն ձեզ:

## ՎԵՐՋԻՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

**17** Կ'աղազե՞մ ձեզի, եղբայրնե՛ր, ուշադի՛ր եղէք անոնց՝ որ կը գոյացնեն բաժանումներ եւ գայթակղութիւններ, հակառակ ձեր սորված ուսուցումին, ու հեռացէ՛ք անոնցմէ: **18** Որովհետեւ այդպիսիները կը ծառայեն ո՛չ թէ մեր Տէրոշ՝ <sup>4</sup>Թրիստոսի, հապա իրենց որովայնին, եւ անմեղներուն սիրտերը կը խաբեն բարի խօսքերով ու գովեստներով: **19** Քանի որ ձեր հնազանդութիւնը բոլորին ծանօթ է, ես ալ ձեզի համար ուրախ եմ. բայց նաև կ'ուզեմ՝ որ դուք իմաստուն ըլլաք բարին հանդէպ, եւ աննենգ՝ չարին: **20** Եւ խաղաղութեան Աստուածը շուտով պիտի ջախջախէ Սատանան ձեր ոտքերուն տակ: Մեր Տէրոշ՝ Յիսուս Թրիստոսի շնորհքը ձեզի հետ:<sup>5</sup>

**21** Տիմոթէոս՝ իմ գործակիցս, եւ Ղուկիոս, Յասոն ու Սոսիպատրոս՝ իմ ազգականներս, կը բարեւեն ձեզ: **22** (Ե՛ս ալ՝ Տերտիոս, որ գրեցի այս նամակը, կը բարեւեմ ձեզ Տէրոշմով:) **23** Գայիոս՝ իմ եւ ամբողջ եկեղեցին հիւրընկալը՝ կը բարեւէ ձեզ: Երաստոս՝ քաղաքին գանձապետը՝ կը բարեւէ ձեզ, նաև Կուարտոս եղբայրը: **24** Մեր Տէրոշ՝ Յիսուս Թրիստոսի շնորհքը ձեր բոլորին հետ: Ամէն:

## ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԱՂՋՁ

**25** Եւ հիմա՝ անո՞ր, որ կարող է ձեզ ամրացնել՝ իմ աւետարանիս ու Յիսուս Թրիստոսի քարոզութեան համաձայն, այն խորհուրդին յայտնութեան համաձայն՝ որ լոռութեան մէջ մնացած էր դարերու ժամանակներէն ի վեր, **26** բայց հիմա բացայայտ եղաւ ու Մարգարէներուն գիրերով – յախտենական Աստուծոյ հրամանին համաձայն – բոլոր հեթանոսներուն գիտցուեցաւ՝ հաւատքի հնազանդութեան համար, **27** միա՛կ իմաստուն Աստուծոյ՝ Յիսուս Թրիստոսի միջոցով փա՛ռք յախտեան: Ամէն:

<sup>4</sup> **Ոմանք՝ Յիսուս Թրիստոսի**

<sup>5</sup> **Ոմանք կ'աւելցնե՛ց՝ Ամէն:**